

Չ² Խաչապուրի մեջ մենք ենք

Սեռական հոլով: ԽԱՉԱՏՈՒՐԻ

Ուսանողական տարիների կտավները Սարյանին էին «սիրահարված»: Ջգաց ու հասկացավ, որ դուրս է գալու լայնահուն ճանապարհից և իր կածանն է բացելու: Սակայն ժամանակ էր պետք, օտարվել էր պետք ազդեցությունից: Եվ ինձ թվում է դրանում մեծ դեր կատարեց այն, որ Ղարաբեկյանը երկար տարիներ աշխատեց Հոլիվուդում: Արեւելյան անվան պետքատրոնում՝ որպես գլխավոր նկարիչ: Հայ և համաշխարհային բազմաթիվ դասականների պիեսների բեմադրությունների ձևավորում հեղինակեց: Դա բարդ, իր օրենքներն ունեցող աշխատանք է, հարկավոր է ստեղծել այնպիսի միջավայր, որը գրական հենքի տիպական պայմաններն ապահովող լինի, որը համընկնի բեմադրող ռեժիսորի միզանսցենարի դրվագների երևակայությանն ու դրվածքին, որն աննկատ օգնի դերասանին կերպարակերտման մերձագրեցություններում, գունային լուծումները բնականի պայման լինեն, այդ բոլորով հանդերձ՝ դեկորները դյուրակիր ու կարճ ժամանակում «կառուցվող» և դեռ՝ պահպանել է պետք արվեստագետի ինքնությունը...

Թատրոնի գլխավոր նկարիչ լինելը տաղանդաշատ գեղանկարչին և՛ օգնեց, և՛ խանգարեց: Այդ տարիների նրա կտավներում մուտք գործեց որոշ խոսուն դեկորայնություն, որն անհատական ձեռագիր դիտվելով հանդերձ, այնուամենայնիվ, ինչ որ տեղ, թույլ նշմարելի «թատրոն» էր պարունակում իր մեջ: Խաչիկը սա զգաց և թվում է, փշաքաղված վանվելու էր «կործանարար» ձևից, բայց... Խոսեց նրա տաղանդի ուժը և նա հասկացավ, որ էթե այդ դեկորայնություն-մատյուրմորտին ենթատեքստային ավյուն է ներարկում, ապա ասելիքը դառնում է գաղափար:

... Ահա «Ինվենտար N 978»-ը: Շրջված իկոնա է, տնտեսվարի անփույթ ձեռքով խզբզված «N 978»: Կողքին ձուկ, շիշ... ջրով լի: Այդ, ջրով: Մեծ երևակայություն պետք չէ հասկանալու համար, որ ինվենտարի համարը թվականն է: Հիշենք այդ թվականների անցուդարձը: Սովետները մեծ շուքով տոնել էին Հոկտեմբերյան մեծ հեղափոխության 60-ամյակը: Ձարգացած սոցիալիզմի տրիունֆը գլխապառույտ էր առաջացնում: 10-րդ հնգամյակի, սոցիալիստական դեմոկրատիայի մասին ԽՍՀՄ Կենտկոմի գլխավոր քարտուղար, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ ընկեր Բրեժնևի ասույթները գրնգում էին 22,4 միլիոն քառակուսի կիլոմետր զբաղեցնող երկրի բոլոր անկյուններում: Հայաստանի նկարիչները մասնակցել էին «Սովետական Անդրկովկասի գեղանկարիչները ԽՍՀՄ 25-րդ հնգամյակին», «Փառք աշխատանքին» ցուցահանդեսներին... Իսկ Խաչիկ Ղարաբեկյանը նկարում էր՝ պատմելով, որ սրբությունները շրջված են և ունեն սոսկ ինվենտարի արժեք, որ ձուկը իր ջրում չէ և ջուրը շնչահեղձ, ջրի կարտոն ձկան կողքին՝ թափանցիկ շշով, տառապանքն է... Փոքր շրջանակի մի ամբողջ դարաշրջան ու նրա ողբերգությունը:

«Իմ սեղանը» (1975թ.) օղու դատարկ բաժակ, ծխամորձ, լուցկի, իսկ ինքը՝ չկա:

«Շրջված սրբապատկերներ»... միայն մեկը մայում է հոգուդ մեջ՝ բոլորի կողմից ու անունից արտահայտելով խռովք ու ճիչ...

«Նատյուրմորտ», փշակիր կուժ, դատարկ, անկտավ շրջանակ, որից ... շերեփներ են կախված:

Այս բոլորն անշուշտ չէր ունենար իր գեղագիտական ասելիքը, եթե չլիներ գույների գուսպ համադրումը (այդ մասին դեռ կխոսվի): Հեղինակն ամենաուժգին խռովքի պահին անգամ, զգում էս, անթեղում է իր պորթկումը: Հենց դրանում չէ՞ արդյոք գաղտնիքը, որ այդ զսպաշապիկ հագած պորթկումը ավելի է ներագրում դիտողի վրա: Սակայն եթե թեման վերաբերում է բնանկարներին, Ղարաբեկյանը «առատածեռն» է դառնում: Ահնի-ծորյան շարքը մեր բնաշխարհի երկնաբանության սիմֆոնիկ հիմն է, իսկ «Անձևից առաջ» կտավի գորշ երկնքի ու գորշամած վառ կանաչի համադրումը, «Ձմեռը Յուրմալայում»-ի վերձիգ, դեպի երկինք միտվող բնաշխարհի, բայց երկինք չպատկերող կտավի արծաթե երանգները լառություն են շնչում: Մի դեպքում, ուր որ է պայթոք, լուրջությունը պատահառտող ամպրոպին սպասող լարված համությունն է, մյուսում՝ անդորր, անվերջանալի անդորր....

Տրական հոլով. ԽԱՉԱՏՈՒՐԻ

Խաչատուրին մենք պարտք ենք:

- Չէ, ինչու՞ ինձ... Բոլոր արվեստագետներին: Ժամանակակիցները միշտ էլ իրենց կողքին ապրող մեծերին, տաղանդավորներին, շնորհքովներին պարտք են:

- Նյութապե՞ս, թե՞ բարոյապես, - խորամանկ հարց են տալիս:
- Է՛ն էլ, է՛ն էլ:
- Դու ո՞ր մեկը կուզեիր:

Մտածում է, վառում ծխամորձը:
- Երկուսն էլ: Շատ նյութական պետք չի: Չկան կոնսերվա լինի, հաց... էտ ա, էլի... Նյութականից որ շատ ուզեինք, չէինք մնա այս աղքատ երկրում... Բայց թեկուզ քիչը՝ պետք է: Արվեստագետին պահել է պետք, որ նա ազգի, ժողովրդի, մոլորակում ապրող բոլորի համար ստեղծագործի: Արվեստագետը մի անգամ է ծնվում: Ուրեմն պահել պետք է թե՛ ընենք, թե՛ ընենք... Օրինակ, որ ես սոված լինեմ, ստիպված պիտի ծախելու համար նկարեմ: Բայց եթե ստեղծագործելիս մտածեցիր, որ նկարում ես ծախելու համար, գեղանկար չի ստացվի:

Հայցական հոլով. ԽԱՉԱՏՈՒՐԸ

Ձախլիկ է: (Մի քիչ էլ ծախորդ, ինչպես բոլոր արվեստագետները): Ողջ կյանքում միս չի կերել: Միայն՝ ձուկ: Խմում է գինի՝ կում-կում: Միրում է փիլիսոփայել, երբեմն էլ՝ շատ անհաջող ու կարգունակ գլուխ գովալ...

- Տեսնում ե՞ս, ինչ լավ նկար ա:
- Հա:
- Ձգում ես, չէ՞:
- Ձգում եմ:
- Այ ըտենց... Ուրիշ ձևով պիտի լինի: Գիշտ նկարիչն ուրիշ ձևով պիտի մայի: Ըտենց չի՞...

Գովասանք լսելիս յուրահատուկ ժպտում է, տրամադրությունը բարձրանում ու կարճ, առողջ-կոկորդային ծիծաղում է՝ հո՛-հո՛-հո՛հըմ:

Բացառական հոլով. ԽԱՉԱՏՈՒՐԻՑ

Խաչատուրից արարվեց պատկերվածի ձևի և բովանդակության համադրությամբ քննաբար մտածելու կերպը:

Ղարաբեկյանի կտավներում աշխարհը առանձնացված է, մերթ «մեծ աշխարհի մեր անկյունն է», մերթ՝ մեր անկյան աշխարհը:

Տրամադրությունը հանդարտ ու գուսպ դասականությամբ է շնչում: Գույները, կոմպոզիցիաները, վրձներանգն ու վրձնաշերտը չեն զիզգազվում, չեն ճչում: Նա, պարզապես, քեզ ուղեկցում է իր «սենյակը» և այն, ինչ կա այնտեղ, դու ինքդ ես տեսնում, քեզ ցույց չեն տալիս: Սակայն, քանի որ մայելն ուրիշ բան է, տեսնելն ուրիշ, նկատելն ուրիշ և հաս-կա-նա-լը ուրիշ... Պայթում է ենթատեքստը և դու ոչ միայն ֆիզիկապես ես նրա հետ այլև՝ գիտակցորեն. գեղանկարչի հետ սկսում ես մտածել, քննել... Եվ աշխարհիկ ենթատեքստը գեղագիտական-ոգեղեն ներկայացում է դառնում՝ գեղագետի ժամանակի մեջ պահելով, նրա հայացքով դիտել տալով այդ ժամանակը:

Եվ էլի մի բան. արվեստագետն այնքան հաստատում է ասում այդ ենթատեքստը, որ բանավիճելու տեղ չի մնում:

Գործիական հոլով. ԽԱՉԱՏՈՒՐՈՎ

Խաչատուրով մի ընդգրկում պատուհան բացվեց: Դրսից ես մայում խոհուն, ծանրակշիռ, տաղանդավոր արվեստագետի աշխարհն է: Ամիջապես ներս է հրավիրում քեզ այդ պատուհանն ու երբ ներսից ես մայում՝ մշտնջենական հմայք ու քմայքով աշխարհն է՝ իր ստեղծումից մինչև այսօր ու հետո:

Եվ այդ աշխարհի մեջ՝ մենք: Մենք՝ հայերս Հաբեթից մինչև այս պահին ծնվող նորամանուկը:

Կանցնեն տարիներ, տասնամյակներ ու Խաչատուր-պատուհանով սերունդները կիմանան մեզ բաժին ընկած աշխարհ-ժամանակի ու մեր մասին: Իսկ մինչ այդ նա ասում է՝ «Աշխարհի կենտրոնը իմ ապրած տեղն է»: Այդպես էր գրել անցած տարվա իր ցուցահանդեսի հրավիրատոմսին ու հրավիրել բոլորիս՝ աշխարհի կենտրոնը:

Սամվել ԽԱՆՍՅԱՆ

Ռուսական մշակույթի կենտրոն «Ռոսիա» հկ-ի հարկի փակ



Հայաստանում ՌԴ դեսպանատան, Հյուսիսային Հայաստանում գլխավոր հյուպատոսարանի, ինչպես նաև հովանավորների ջանքերի շնորհիվ «Ռոսիա» հասարակական կազմակերպության Լոռու մասնաճյուղը վերջապես հարմարավետ գրասենյակ ունեցավ: 2000թ.-ից գործող հկ-ն վերջին 3 տարում գործում էր Վանաձորի թիվ 4 դպրոցի մի փոքրիկ սենյակում: Այժմ «Ավտոմատիկա-ԳՀԻ» ՓԲԸ-ի մասնաձեռնում վարձակալված սենյակները վերանորոգվել են և պատրաստ են ընդունել շահառուներին: Օրերս կայացած բացման արարողությանը ներկա էր գլխավոր հյուպատոս Ալեքսանդր Ֆեդորինովը, ինչպես նաև հկ-ների ներկայացուցիչներ, շահառուներ: - Սա կառնա ռուսական մշակույթի կենտրոն, - մշեց մասնաճյուղի նախագահ Պավել Մարտիրոսովը՝ շնորհակալություն հայտնելով աջակցության և նվերների համար: «Ես հույս ունեմ, որ մի քանի տարի անց այս կենտրոնի անունը բարձր կհնչի և՛ Հայաստանում, և՛ Ռուսաստանում, - ասաց Ա. Ֆեդորինովը: - Սա ռուսաց լեզվի ամրապնդման առա-

ջին քայլն է, որը նաև մի շնորհակալ նպատակի կծառայի՝ մեր երկու ժողովուրդների առավելագույն մտերմությանը», - մասնավորապես մշեց նա: Հյուպատոսն անդրադարձավ հատկապես ռուսաց լեզվի հիմնախնդրին: ԽՍՀՄ-ի փլուզման հետ ռուսերենը՝ իբրև միջազգային հաղորդակցման լեզու սկսեց դիրքերը զիջել, բայց այսօր դարձյալ նկատվում է դրական միտում. շատ հայ երիտասարդներ ցանկանում են ուսումը շարունակել ռուսական բուհերում: Այնինչ, ըստ միջազգային իրավունքի պրոֆեսոր Հովհաննես Հարությունյանի՝ հյուպատոսարանին ուղղված ռուսերեն դիմումներում քաղաքացիները սխալ են թույլ տալիս նույնիսկ սեփական անուն-ազգանուններում: Ի դեպ, փոքրիկ Ռիտա Հովհաննիսյանը խնդրեց ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինին հանձնել իր նամակը՝ զրկած անթերի ռուսերենով: Կազմակերպության անդամներին հուզում էր ոչ միայն ռուսերենի ուսուցումը հայկական դպրոցներում, որտեղ այժմ ստիպված են սովորել նրանց թոռներն ու երեխաները: Նրանք ուրախ էին, որ այսուհետ կլինի մի վայր, որտեղ կարող են հավաքվել, զրուցել, իրենց խնդիրները կիսել, ազգային տոներ մշել: Պ. Մարտիրոսովի տեղեկացմամբ՝ կենտրոնում կբացվեն խմբակներ, որոնցում, անկախ ազգությունից, երեխաներին կսովորեցնեն ռուսաց լեզու և գրականություն, ռուս և հայ ժողովուրդների պատմություն, բայց միայն ռուսերենով: Կենտրոնում հատուկ ուշադրություն պետք է դարձվի վարվեցողության կանոնների ուսուցմանը: Ըստ հկ-ի նախագահի՝ խմբակներում ընդգրկվելու համար նույնիսկ արդեն հերթ է գոյացել: Նշենք, որ «Ռոսիայի» մարզային մասնաճյուղում 986 անդամ է գրանցված, իսկ ռուսները՝ մոտ 8 հազար 600 են, որից 1600-ը՝ Վանաձորում: Հետաքրքիր է, որ Շիրակի մարզում, մասնավորապես Գյումրիում, ռուսական համայնքն ավելի մեծ է և հենց այնտեղ է գտնվում Հյուսիսային Հայաստանում գլխավոր հյուպատոսարանը, սակայն նման կենտրոն այնտեղ առայժմ չի գործում: Գյումրեցի լրագրողի՝ իր իսկ բնորոշմամբ «նախանձով» տրված ինչո՞ւ հարցին հյուպատոս Ա. Ֆեդորինովը պատասխանեց. «Ինձ թվում է Գյումրիում, Շիրակի մարզում ղեկավարությունը դրան այնքան էլ մշանակություն չի տալիս: Միգուցե նաև սոցիալական վիճակով է պայմանավորված»:

Տ. ԱՇՈՒՂԱԹՈՅԱՆ
«Գործարար» ամսագրի համար

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԺԸ ՄԵԾ ՊԱՀԱՆՋԱՐԿ ՈՒՆԻ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

2002-2005 թթ. աշխատանք գտնելու նպատակով Հայաստանը լքել է 116 հազարից մինչև 147 հազար մարդ, որի 14 տոկոսը կանայք են: Այս տվյալներն են ստացվել «Ժամանակակից սոցիալական տեխնոլոգիաներ» կազմակերպության անցկացրած հարցման արդյունքներով: Դրանք անցկացվել են Հայաստանի բոլոր մարզերում: Աշխատուժի առավել մեծ արտահոսք է նկատվել Շիրակի և Լոռու մարզերում, փոքր-ինչ ցածր՝ Երևանում, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում և ամենացածրը՝ Արմավիրի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերում:

ԵԱՀԿ երևանյան գրասենյակի նախագահ Վլադիմիր Պոլյախինը, մեկնաբանելով այս ցուցանիշները, այն կարծիքն է հայտնել, որ Հայաստանը զգալի կախվածություն ունի արտերկրի աշխատուժից, քանի որ հայերի մեծ մասն ապրում է Հայաստանից դուրս: Նա նաև ընդգծել է, որ հայկական աշխատուժը մեծ պահանջարկ ունի Ռուսաստանում, հատկապես բժշկության բնագավառում: ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավարը հայտնել է, որ Ռուսաստանի Պետդոմայում 5 հայեր կան, որոնցով իրենք հպարտանում են: **Ա. Ս.**

ԿՊԱՇՏՊԱՆԵՆ ԳԱՂԹՅԱԼՆԵՐԻ ՇԱՀԵՐԸ

Ռուս-հայկական գործարար համագործակցության ընկերակցության գործունեության շրջանակներում իր աշխատանքն է սկսել իրավական ծառայությունը: Աշխատանքն ընթանում է մոսկվացի հայտնի փաստաբան Ռուբեն Կիրակոսյանի իրավաբանական

խմբի մասնակցությամբ: Գործնական օգնություն ցույց կտրվի ամենատարբեր հարցերում, այդ թվում՝ պաշտպանություն Ռուսաստանի Դաշնությունից ապօրինի արտաբտումից, օգնություն աշխատանքի թույլտվություն ստանալիս, ինչպես այլ հարցերում:

«Ես եւ դու, մենք եւնք Հայաստան աշխարհի րները: Տեր կանգնենք մեր երկրին»




Այս կարգախոսով է «Հանուն Գուգարաց աշխարհի» բիւ-ն մուտք գործում հասարակական կազմակերպությունների դաշտ: Սակայն ինչպես հիմնադիր ժողովում նշեց նախածեռնության հեղինակը՝ Աժ պատգամավոր, «ժողպատգամավոր» խմբի քարտուղար, ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի փոխնախագահ, տնտեսագիտության դոկտոր Վահրամ Բաղդասարյանը, իրենք գալիս են ոչ թե հի-ների թիվը լրացնելու, այլ «ինչ-որ լավ բան անելու հաստատ որոշումով, իրենք առջև դրված խնդիրը լուծելու աներեր վճռակամությամբ»: Հիմնադիր ժողովը, որը կայացավ Հոկտեմբերի 11-ին, Արեւելյանի անվան պետական դրամատիկական թատրոնի լեւի-լեցուն դահլիճում և ուղիղ եթերով հեռարձակվում էր «ՄԻԳ» հեռուստաընկերությամբ, բավականին ներկայացուցչական էր: Ներկա էին Աժ պատգամավորներ, մարզային իշխանությունների, պետական ու հասարակական կառույցների, մշակույթի, կրթության ու արվեստի բնագավառի ներկայացուցիչներ, ՀՀ գլխավոր դատախազ, «Նիգ-Ապարան» հայրենակցական միության նախագահ Աղվան Հովսեփյանը: Հնչեց ՀՀ պետական օրհներգը: Ժողովում նշվեց, որ բարեգործական հասարակական կազմակերպություն ստեղծելու որոշումը մեկ օրում չի կայացվել: Այն հասունացել է բազմաթիվ հանդիպումների, քննարկումների արդյունքում: Բայց քանի որ «2005 թվականը հարուստ էր քաղաքական գործընթացներով՝ ՏԻՄ ընտրություններ, սահմանադրական փոփոխությունների հանրաքվե, քաղաքական երանգներից գերծ մնալու համար», նախածեռնող խումբն առաջին անգամ հանդես է եկել այս տարի՝ հունվարի 9-ին: Հայտարարվեց, որ այս կարծ ժամանակաընթացքում բազմաթիվ քաղաքացիներ՝ 11 հազար 750 մարդ, Վանաձորից և շրջակա գյուղերից կազմակերպությանն անդամակցելու ցանկություն են հայտնել: Նախածեռնության հեղինակները շեշտում են, որ թեև հի-ի անվան մեջ կա որոշակի աշխարհագրական սահմանափակում՝ «Հանուն Գուգարաց աշխարհի», սակայն իրականում դա սոսկ պայմանական է և ընտրվել է իբրև նախածեռնության բնորոշ: Իսկ բիւ-ի նպատակն է տարբեր բարեգործական ծրագրերի միջոցով նպաստել հասարակությանը հուզող սոցիալական, տնտեսական, կրթական, մշակութային, առողջապահական և այլ խնդիրների լուծմանը: Հիմնադիր ժողո-

վի աշխատանքը և հետագա գործողություններն օրհնեց Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ Եպիսկոպոս Չուլջյանը: «Մաղթում եմ, որ այնպիսի վաստակ ձեռք բերեք, որպեսզի բազմաթիվ մարդիկ օրհնեն և միայն իմ օրհնությամբ չսահմանափակվեք», - ասաց սրբազանը: Ապա հի-ի նպատակներն ու խնդիրները ներկայացրեց Վ. Բաղդասարյանը: «Ստեղծելով բարեգործական հասարակական կազմակերպություն՝ փորձ ենք անում հանդես գալու որպես մարդկային հնարավորությունների, ներուժի և բարի մտադրությունների համախմբման յուրօրինակ կազմակերպիչ ու ոգեշնչող, - մասնավորապես ասաց Վ. Բաղդասարյանը: - Մարդիկ միասին կարող են անել այն, ինչ չեն կարող անել միայնակ: Մենք չունենալով ոչ մի քաղաքական ամբիցիա, չենք բացառում մեր համագործակցությունը բոլոր այն քաղաքական ուժերի հետ՝ թե՛ իշխանական, թե՛ ընդդիմադիր, որոնք կնպաստեն մեր ծրագրերի իրագործմանը: Չենք բացառում նաև մեր համագործակցությունը ցանկացած անձի հետ, ում համար ընդունելի են մեր նպատակներն ու ծրագրերը, ով կփորձի գոնե մի ավագահատիկի չափ աջակցել», - նշեց նա: Բացի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավմանն ուղղված քայլերից՝ Վ. Բաղդասարյանը կարևորեց կրթության և մշակույթի, մատաղ սերնդի ու երիտասարդության մեջ ազգային արմատավորումը: «Եթե մեր ազգային նկարագրի առաջին հատկանիշները չլինեն բարոյականությունն ու պարկեշտությունը, ապա մենք կկորցնենք ինքներս մեզ, մեր ժողովրդին և, իհարկե, բաց կթողնենք մեր յուրօրինակ ազգային նկարագիրը պահպանելու պատմական պահը», - ասաց նա: Ապա նշելով, որ երկրի հասարակական-քաղաքական գործընթացներին մասնակցությունը շուրջ 15 տարվա պատմություն ունի՝ Վ. Բաղդասարյանը համառոտ ներկայացրեց այդ ընթացքում կատարված բարեգործությունները, ցուցաբերված աջակցությունները ոչ միայն Վանաձորում, այլև հարակից գյուղերում՝ կապված կրթության, մշակույթի, շինարարության և այլ ոլորտների հետ: Այնուհետ խոսեց գալիք ծրագրերից: Այս տարի շուրջ 3 հազար նախադպրոցական տարիքի և տարրական դասարանների երեխաների կհանձնվեն խորհրդանշական նվերներ: Արձագանքելով «Նիգ-Ապարան» հայրենակցական միության կողմից 300 հազար ծառ կտնկվի Գուգարք աշխարհում: 2006-ի մայիսի 28-ը տառ-ճռների գրուսայում կկազմակերպվի Գուգարք աշխարհի օր, և Լոռիի բնութագրող արձան կտեղադրվի: Իսկ ՎՊՄԻ-ի տարածքում կտեղադրվի շուրջ 30 տարի բուհի ֆիզմաթ ֆակուլտետի դեկան աշխատած ժողա Հախինյանի կիսանդրին և այլն: «Հանդգնված եմ, որ կկարողանանք իրագործել մեր ծրագրերը, - ասաց Վ. Բաղդասարյանը՝ խոստանալով 6 ամիս առջև հանդես գալ հաշվետվությամբ: - Եթե ամեն մեկս ծով հիմնախնդիրներից մի բաժակ ջուր վերցնենք, ապա խնդիրների ծովի մակարդակը մի քիչ կիջնի», - հույս հայտնեց նա՝ ակնկալելով նաև մարդիկ դեկավարների աջակցությունը: Աժ «ժողպատգամավոր» խմբի անունից կազմակերպությանը կանաչ ճանապարհ մաղթեց Մկրտիչ Մինասյանը: Իսկ պատգամավոր Աղասի Արշակյանն ընթերցեց «Նիգ-Ապարան» հայրենակցական միության ուղերձը՝ վստահություն հայտնեց, որ հի-ն մեծ հաջողություն է ունենալու: «Մենք ջանք ու եռանդ չենք խնայի մեր համեստ ուժերը ներդնելու այս գործում», - մտավորական ընկերների անունից խոստացավ ՀԳՄ Լոռու մարզային բաժանմունքի նախագահ Հրաչյա Սարուխանը: Հնչեցին բազմաթիվ շնորհավորական և ողջույնի ելույթներ: Ապա ընտրվեց բիւ-ի դեկավար մարմինների կազմը՝ նախագահությունը կազմված 41 և վերստուգիչ հանձնաժողովը՝ 21 անդամից: Կազմակերպության նախագահ միաձայն ընտրվեց Վահրամ Բաղդասարյանը: Հաջորդ քայլը կլինի գրանցվելու համար արդարադատության նախարարություն դիմելը: Ժողովի ավարտից ու փոքրիկ հյուրասիրությունից հետո ներկաներին հրավիրեցին դիտելու առաջին հովանավորչական ներկայացումը՝ «Ռոմեո և Ջուլիետ»։ Ժողովից հետո ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը պատասխանելով լրագրողների հարցերին, մասնավորապես ասաց. «Հի-ի դերը դրական են գնահատում, որովհետև բարի, կառուցողական նպատակ ունի: Անունը հուշում է, որ ամեն ինչ անելու են, որպեսզի Գուգարք աշխարհի յուրաքանչյուր լոռեցի ունենա բարեկարգ օջախ»:

ԲԱՅ ՆԱՄԱԿ ՌԱՖԱՅԵԼ ԱԹՈՅԱՆԻՆ

Նկարչի ծննդյան 75-ամյակին



Աթո ջան

Առաջին անգամ չէ, որ վերջին տասնամյակում գրում եմ քեզ, բայց այս նամակս ուղարկում եմ ոչ թե փոստով, այլ թերթի միջոցով՝ շնորհավորելու համար ծննդյանդ 75-ամյակը: Չեմ ուզում խորթություն, արհեստականություն մտցնել խոսքիս մեջ, ենթարկվել «բաց» նամակի պահանջներին: Թող խոսքս լինի անկեղծ, ինչպես միշտ, և միաժամանակ բաց՝ մեր հայրենակիցների համար՝ Երևանում, Լոս-Անջելեսում, Ֆրեզնոյում թե այլուր:

Շուտով կլրանա տասը տարին, ինչ կյանքը բաժանեց մեզ և մեր ամենօրյա կապը վերածվեց նամակագրականի, մեկ-մեկ էլ՝ ինչպես դու կասեիր՝ «բազի-բազի», հեռախոսայինի: Այս վերջինից մենք կամավոր հրաժարվեցինք, երբ հանգրվեցինք, որ անկապ բացականչությունները քիչ բան են տալիս, իսկ լռել կարելի է անշքաջին, երբ լսելի է լռության ձայնը...

Ինչո՞ւ հորեյանդ շնորհավորում եմ ոչ թե քո երևանյան արվեստանոցում, բաժակը ձեռքիս, այլ բաց նամակով՝ երկրագնդի այս կեսից: Հիմ աշխարհի մարդիկ երկիրը պատկերացնում էին երեք հսկա կետերի վրա: Ֆրանսիական հեղափոխությունը նույնպես ուներ իր երեք հենարանները՝ ազատություն, եղբայրություն, հավասարություն: Իսկ մեր անկախ Հայաստանում կետերը շնածկներ դուրս եկան: Ամեն ինչ սկսվեց մոդայիկ բառերից՝ ազատականացում, պրիվատիզացիա, վաուչերիզացիա: Ազատականացումը հայերեն բառ էր, իմաստը՝ զարմանալի: Այն, ինչ երեկ արժեք 5 կոպեկ, այսօր պետք է գնելի 5 ռուբլով: Մինչև հասավ պահը, երբ աշխատավարձը վերածվեց հաշվված ձվերի: Պրիվատիզացիայի հայերենն էլ սարերի հետևում չէր և չնայած անհասկանալի շատ բան էր կատարվում դրա շուրջը, մասնավորեցման գործընթացը չափազանց վարժ հիմնավորում էին այն օրերի ճարտար-ապետ-վարչ-ապետները: Բայց թե ի՞նչ գազան էր վաուչերիզացիան, որ հասարակարգը բաժանեց երկու անհավասար մասերի, քչերը հասկացան: Պարզ էր միայն, որ գործում էր հակադարձ համեմատականության օրենքը՝ որքան անճանալի էր վաուչերներ կուտակող խավը քանակապես, այնքան վիթխարի էին դառնում նրա տնտեսական ուժն ու հնարավորությունները:

Նման իրադրություններում, երբ հրապարակ էր հանվում «լինել թե՛ չլինել» հարցադրումը, ժողովուրդը միշտ ենթարկվել է հոսող ջրի օրենքին: Շատերը գտան այդ ելքը և շատերի թվում՝ դու: Ճիշտն ասած, քո մեկնելն ինձ անհամազայտացրեց: Ինչպե՞ս կարող էր Լենինականում ծնված գյուճերցի Աթոն, որի նկարները շնչում էին Շիրակի գույներով ու եկեղեցիներով, արտերով ու կալերով, խնոցիով ու խեցեղենով, պղնձե ամաններով ու փարչերով, հարմարվել «ֆրիվելյ-

ներին» ու «դաունթաուններին»:

Այսօր, տարիներ անց, ես բախտ ունեմ լինելու այն սակավաթիվ մարդկանցից մեկը, որը երևանյան իր բնակարանում ժամանակ առ ժամանակ թերթում է արտասահմանյան քո այլոսը: Ոչ միայն թերթում, այլև գրուցում, մտովի տեսնում նույն Աթոյանին, ներկայանալին ամրացված նույն կտավի վրա ամիսներով կքված: Միայն քո կողքը չենք մենք, գիտակներս, որ հայտնեիրք մեր amateur կարծիքը:

- Ստորագրիր, Աթո, գործն ավարտված է...
Եվ դու քթիդ տակ քրթմնջալով քանիտորդ անգամ կտայիր նույն պատասխանը.
- Նայա գործընդ կա դեռ...

Ալբոմային նկարներից նայում ես դու՛ նույն Աթոյանը, մեռած վարքությունը կենդանացնող ու շնչավորող կախարդը, բայց արի տես, որ դեղծին ու ծիրանին փոխարինել են բանասն ու անասնը: Նույն Աթոյանն էս, երեկվա ամանց կարոտով ու թախիծով, բայց Գյումրվա ֆայտոնին փոխարինել է անցյալ դարասկզբից պատահմամբ պահպանված տիրամած «Ֆորդը»: Ինչ նոր կտավների տակ էլ դրվի ստորագրությունդ, միևնույն է, արդյունքում ստացվում է կարոտով լցված և թախծոտ աչքերով աշխարհին նայող հայ նկարչի գործ, ճիշտ այնպես, ինչպես ինչ գիրք էլ գրեր քո համաքաղաքացի ամերիկյան արծակագիրը, տողամիջում և տողերի հետևում ուրվագծվում էր հաստ բեղերով բիթլիսցին: Ակամա վերհիշում ես Սիբիրում գրված մեկ այլ մեծ հայի տողերը.

*«Երջանիկ է նա, ով այս աշխարհում
Կրեց իր հոգում մի երկրորդ աշխարհ...»*

Դու պահեցիր քո մեջ աթոյանական քո աշխարհը, սիրելի Աթո, և դրանում է քո արվեստի մշտնջենական ուժը... Եվ ոչ միայն քո: Դրանում է բոլոր այն արվեստագետների ստեղծագործական գաղտնիքը, որոնք ապրում են հայրենիքից հեռու:

Ուրիշ ի՞նչ գրեմ: Հիշո՞ւմ ես քո արվեստանոցի պատուհանից երևացող բազմաշարք բթեմին: Ասում եմ «բազմաշարք», որովհետև շատ կերպարանափոխումներ քաջեց նա քո վրձնից: Գարնանը՝ աղջնակ, ամառը՝ հասուն կին, աշնանը՝ բալզակյան պչրանքով, իսկ ձմռանը՝ պառավ ջարդու: Փոխվում էր նա հարափոփոխ բնության հետ և խորհրդանշում անցողիկ կյանքը:

Այդ բթեմին հիմա չկա: Մթան ու ցրտի տարիներին նա վառվեց ինչ-որ մեկի վառարանում՝ գուցե մի երեխայի կյանք փրկելով: Մի զարմացիր, մրգատու թե ոչ՝ նույն ջերմությունն է տալիս ճարճատվող փայտը...

Միշտ հարցնում ես՝ «տղերքից» ի՞նչ լուր: Նրանց մագերիմ ձյուն է իջել: Կառլեն Ադամյանը հաճախ ելույթ է ունենում հեռուստատեսությամբ և բողոքում, որ ավելացել են սրտանոթային հիվանդությունները: Լավ է, որ «տղերքի» մեջ հոգեբան չկար, այլապես ուրիշ բաներ էլ դեռ կլսեինք... Ալբերտս իր եղբոր Ֆրունզե Սկրլոտչյանի հիշատակն է հավեթացնում, բավական մեծ տրամագծով՝ Գյումրուց Լոս-Անջելես: Ռոբերտ Նազարյանին հիշո՞ւմ ես, քո հայրենակցին, որին «ծո» էինք կանչում... Բայց ավելի լավ է չչարունակեն, որովհետև համարապետության այսօրվա ղեկավարների մեջ ճիշտ նույն անուն-ազգանունով մեկը կա, հանկարծ խոսքս նրան կգնա «քաջ որսկանի գյուլլու պես...»:

Տխուր մի լուր էլ պետք է հաղորդեմ: Մահացավ Ավիյանյան: Հիշում եմ, երբ մեկնեցիր, քո ներկերը նրան թողիր...

Մի քանի օր առաջ նորից ցույց տվեցին «Կարոտը»: Անկեղծորեն ասած՝ բարձր կարծիք չունեմ Հրաչյա Քոչարի ստեղծագործության մասին, բայց դիտելով ֆիլմը, մի անգամ էլ մտածեցի, որ ժողովրդի հիշողության մեջ նա կնմա ավելի քո ստեղծած Առաքելի կերպարով, քան իր գործերով:

Գեղանկարչական կարոտից կարծես անցանք կինոյի կարոտին: Բայց վերահառնանք մեր, ավելի ճիշտը՝ քո տարիներին: Նամակ ուզում եմ ավարտել շնորհավորանքով: Շնորհավորում եմ քո 75 տարիները: Այդ 75-ը, եթե անգամ շաքարի քառակուսիներ լինեին, նորից ծանր կկռեին, ուր մնաց, որ խոսքը աթոյանական տարիների մասին է, տարիները՝ լեցուն ինքնատիպ կտավներով, աթոյանական աշխարհընկալումով, գույներով և ապրումներով, ստեղծագործական հորիզոնների նվաճումով... Ուրախությամբ եմ լսում քո անհատական ցուցահանդեսների մասին ամերիկյան տարբեր քաղաքներում: Վերջերս նոր տեսություն է ի հայտ եկել, ըստ որի ոչ միայն արդարացվում է արվեստագետների արտահոսքը, այլ անգամ դրական միտումներ են այդտեղ հայտնաբերվում: Չեմ ուզում վիճել, թե պետ ասելիք շատ կա: Ուզում եմ պարզապես ասել՝ որտեղ ուզում ես, Աթո ջան, այնտեղ էլ ապրի, միայն ապրի և շատ ապրի, որովհետև չնայած մեր անցյալ դարը հարուստ էր մեծություններով, դրանց շարքում դու գրավել ես քո օրինական տեղը: Եվ թող ամուր լինի քո արարիչ ձեռքը:

Եվ թող մի անհասկանալի եղբայրական համբույր դրոշմեմ քո միրոսին:

Միշտ քո՝
Գրիգոր ԱճԵՍՅԱՆ, Երևան

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. «ԴԵՌ ԱՄԵՆ ԻՆՉ ԿՈՐԱԾ ՉԷ»

Այս տարի լրանում է անվանի մտավորական, հրապարակախոս և թարգմանիչ Արմեն Հովհաննիսյանի ծննդյան 70-ամյակը: Տասնյակ տարիների ստեղծագործական ճանապարհին նրա գրիչը կանգառներ չի ունեցել, և այսօր էլ իր հրապարակումներում նա շարունակում է ահագնազել հայ մշակույթին դարանած վտանգների մասին:



- Պարոն Հովհաննիսյան, ձեր աչքից, բնականաբար, չէր կարող վրիպել հոգևորի հաշվին որևէ խոչընդոտի չիանդիպող նյութականացման գործընթացը, ինչն, անշուշտ, պետք է մտահոգի յուրաքանչյուր մտավորականի: Այսօր նրա ձայնը որքանով է լսելի:

- Չգիտեմ մյուսներն ինչպես, բայց տարիների ընթացքում, ձեռքս ժամանակի գարկերակին պահած, բազմիցս մատնանշել եմ մեր մշակույթին սպառնացող վտանգները: Ես գտնում եմ, որ մեր լեզուն, քաղաքակրթական մեր արժեքները վտանգված են: Սակայն ամեն անգամ համոզվել եմ քար անտարբերության, հաճախ նույնիսկ քամահրանքի: Այնինչ այսօրվա աղավաղումների հետևվանքները հետո ենք զգալու:

- Դուք դասախոսում եք միաժամանակ երեք համալսարաններում (պետական մանկավարժական, Գլաձորի և հայ-ռուսական) և առավել տեղյակ եք նոր սերնդի մտածողությանն ու հետաքրքրություններին: Ինչո՞վ է նա մտահոգված:

- Այն, ինչ նկատել եմ այսօրվա երիտասարդության մեջ, անտարբերությունն ու, որքան էլ ցավակի է, ամենատարրական բաներից անտեղյակությունն է: Դա, անշուշտ, գալիս է ոչ միայն հետաքրքրության պակասից, այլև արդեն իսկ հաստատված արժեքներից, որոնց ձևավորմանը նպաստեց ոչ այնքան մասնուրջ, որքան հեռուստատեսությունը:

Երբ հայտարարվեց, թե մենք այլևս ազատ ու անկախ հանրապետություն ենք, շատերի համար այն դարձավ ոչ թե փորձություն, այլ փորձանք: Այնինչ ազատությունն ամենից ամառ այն է, թե ինչը չի կարելի: Ու շատերը կորցրին ոչ թե գլուխները, այլ չափամիջները:

- Չե՞ք կարծում, որ այս ամենը չվերահսկված լինելու արդյունք է:

- Անշուշտ: Մասնագիտական առումով վերահսկողությունն անհրաժեշտություն է: Ցածորորակ հաղորդումներով ու «երաժշտությանը» հեղեղված հեռուստալիքների գործունեությունը կարելի է համարել մշակութային դիվերսիա, որի դեմ պետք է պայքարել: Որքան հասարակության լայն խավերը հաճախակի մասնակցեն մշակութային հարցերի քննարկումներին ու պարզաբանումներին, այնքան կնվազի «արևելյան բազար» հիշեցնող շուկայի կողմից թելադրվող արտադրանքի քանակը:

Իմ գործունեության 17 տարիները նվիրված են եղել հեռուստատեսությանն ու ռադիոյին: Ես հիշում եմ, թե ինչպիսի պատասխանատվություն էինք զգում մեր աշխատանքի հանդեպ, գիտակցում էինք մեր առաքելությունը, բեռ ունեինք մեր ուսերին: Ինձ հանձնարարված «Ծիածան» ռադիոկայանի ստեղծման համար շատ կարճ ժամանակում

հավաքեցինք իրենց գործին նվիրված որակյալ մասնագետների, ովքեր հիանալի գիտեին, թե ինչ է պետք ժողովրդին: Ի դեպ, նրանցից շատերն այսօր էլ բարեխղճորեն շարունակում են իրենց առաքելությունը: Իսկ ի՞նչ է կատարվում այսօր: Հեռուստալիքները հանդիսատես նվաճելու մարաթոնում մոռանում են նյութի ընտրության և այն պատշաճորեն մատուցելու մասին: Էլ չեմ խոսում «ժամատախտ» կոչվող գովազդից, որը փորձում է մեզ սովորեցնել ապրել, սնվել, հագնվել, անգամ բարոյական նորմեր է քարոզում, և այդ ամենը՝ աղճատված մայրենիով: Իսկ մի՞թե պարզ չէ, թե գրականության, հեռուստատեսության, ժուռնալիստիկայի բնագավառում որքան մեծ է ճիշտ ընտրված խոսքի դերն ու նշանակությունը:

Ընդհանրապես լեզուն յուրաքանչյուր ժուռնալիստի զենքն է և նրա գործունեության հիմնական բաղադրիչը: Սակայն երբ այդ լեզվում նկատվում են խեղումներ և աղճատում, ապա նույնիսկ ամենացավոտ հարցն է մասին խոսակցությունը դժվար թե մտահոգի ընթերցողին կամ ունկնդրին: Բնականաբար, այս փոքր հանրապետության մեջ այսքան հեռուստալիքներ և թերթեր դժվար կարողանան ապահովված լինել բարձրորակ կադրերով:

- Ի՞նչ եք կարծում, «Մեկ ազգ, մեկ մշակույթ» փառատոնը նպաստե՞ց որչափաքանի հայության համայնքմանը:

- Այն, որ փառատոնի մտահղացման մեջ կային դրական տարրեր, անժխտելի է, սակայն նկատվեց նաև խզման տարր: Երբևէ վիճարկվել է, թե աշխարհի ողջ հայությունը այլևս մեկ ազգ չի և չունի մեկ մշակույթ: Արևմտահայ զանգվածը հետևողականորեն մեզ համարում է բուլշևիկյան գաղափարների ջատագովներ: Ասել է թե՛ իրենք դասական են, մենք՝ բուլշևիկյան: Սա մի՞թե պառակտումն է:

Ինձ մտահոգում է ոչ այսպես կարևոր մի խնդիր, այն, որ փորձում են կրթական ծրագրերում պարտադրել արևմտահայ ուղղագրությունը: Ազգը մասնատող, ջլատող առավել մեծ թշնամություն անհնար է պատկերացնել: Դա նշանակում է ստեղծել անգրագետ աշակերտների մի սերունդ և արդեն ավարտած մարդկանց մի վիթխարի անգրագետ բանակ: Այդ դեպքում անհրաժեշտ կլինի վերահրատարակել հազարավոր գրքեր, և կստացվի մի սողուն-գոմոր: Շատերը կիպարտանային, որ մեկ լեզվամշակույթի մեջ ունենան երկու ուղղություն: Իսկ մենք ունենք և փորձում ենք միացնել դրանք: Թե ի՞նչ է ստացվելու այդ հիբրիդից, Աստված գիտե: Ինձ թվում է դրան պետք է դիմագրավի մտահոգ մտավորականների վերաբերմունքը:

- Չե՞ք կարծում, որ հրապարակախոսների պակասը պարարտ հող է ստեղծել գրական խոտանի համար:

- Ես միշտ զարմանում եմ, որ քննադատական կիսատ-պատտ հողված գրողն արդեն իրեն համարում է հրապարակախոս: Այդպես չէ: Հրապարակախոսությունը, թերևս, ժուռնալիստիկայի բարդագույն ժանրն է, և այստեղ պետք է սուք դնի միայն կարող ուժը, որն ասելիք ունի և լինելով իր երկրի ճշմարիտ գավակը՝ մտահոգված է այդ երկրին հուզող խնդիրներով: Իսկ երկրի ճշմարիտ գավակն լինելը դարձել է առուծախի առարկա:

- Ինչո՞վ է դա բացատրվում, համարձակությամբ, թե՛ ասելիքի պակասով:

- Ես կասեի կարողության պակասով: Այնինչ մեզ այսօր անհրաժեշտ է կերտել ազգային գաղափարաբանություն, մշակել հայեցակետեր, ծրագրեր, նախագծումներ և դրանք հանձնել հանրության դատին:

Ինչ վերաբերում է գրական աշխարհին, ապա չեմ կարծում, թե այն դադարի վիճակում է և կամ շարժվում է ինտերգիայի ուժով: Կա և մանկական գրականություն, և գրականագիտություն, և քննադատություն, սակայն դրանք կարծես գտնվում են ապակու տակ: Շարժում նկատելի է նաև թարգմանության բնագավառում: Անցյալ տարի ինձ հաջողվեց հրատարակել Ֆ. Դոստոևսկու «Դևեր» և «Գրառումներ մեռյալ տղից» վեպերը, ցավոք, ընդամենը 400-500 տպաքանակով: Սակայն որքան էլ արտառոց լինի, ընթերցողների չնչին մասն է հակված դեպի գրականությունը, մնացածը գերադասում է հոգին լլկող «արվեստը»՝ չգիտակցելով դրա ավերածությունների հետևանքները:

- Այդ դեպքում ո՞ր է նայում մշակույթի նախարարությունը:

- Իհարկե ոչ այն ուղղությամբ, ուր հարկ է: Փորձում են ինչ-որ բան անել, սակայն ապարդյուն: Պատճառն, անշուշտ, մեր մշակույթի նախարարության հետ կապված խնդիրներն են, ճախարակեր նախարարների հերթափոխը, միմյանց փոխանցվող չլուծված բազում հարցերի տրցակը: Եվ այս ամենի մեղավորը հարկադիր կուսակցականությունն է, որն ընտրում է անպայման անարժան մեկին: Այնինչ մշակույթի նախարար պետք է լինի ոչ թե արվեստագետ, գիտնական, այլ նախ և առաջ ադմինիստրատոր, նա պետք է ունենա կազմակերպչական օջիղ, մարդկանց հետ աշխատելու, նրանց կարողություններն օգտագործելու հմտություն: Ցավոք, այդպիսին առայժմ չկա:

- Չե՞ր ընկալումով ո՞րն է այս վիճակից դուրս գալու ելքը:

- Երբեք չի կարելի ամեն ինչ կորած համարել: Սա էլ ժամանակավոր, անցողիկ վիճակ է, և պետք չէ շարունակ գբաղվել էսփաստոլոգիական (վախճանաբանական) շեշտադրումներով: Ի վերջո, ինչ ալիք էլ որ գա ու գնա, այս հաղթանակած ժողովրդի հետ խաղալ չի կարելի: Մեր ժողովուրդը հարկ եղած դեպքում կարողանում է այնպես դիմագրավել, որ պատկերացնել անգամ չի կարելի: Չէ՞ որ մենք տեսել, զգացել և ապրել ենք բազում փորձություններ: Հոգին կարող է երեքուր, բայց կոտորվել՝ ոչ, այն էլ մի ժողովրդի հոգին, որն այսքան բանից հետո կանգնեց իր ողջ հզորությամբ և ուժով: Ո՞վ կհավատար:

Ես միշտ լավատես եմ: Չի կարող պատահել, որ ժողովրդի արգանդը ցամաքի, անհնար է, որ չլինեն պոթեկուններ: Ես չեմ կարծում, թե այս ամենգիայի շրջանը երկար տևի: Ինչ-որ ցցումն է պետք, հարկավոր է ելման կետ: Թե ո՞րն է դա՝ ժամանակը ցույց կտա:

ԱՄՈՂ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀԱՅ ԵՐԳՆ ԱՆՊԱՇՏՊԱՆ Է

«Առաջնորդվել ժողովրդի ճաշակով, նշանակում է չծառայել նրան»:

Պ. Սևակ



Երաժշտության աշխարհի ոտք դրած նորելուկ երգիչ-երաժիշտները, արևելյան կամ եվրոպական բազմերանգությամբ զգեստավորելով հայ երգն ու երաժշտությունը, փորձում են նոր շունչ հաղորդել դրանց՝ չզիտակցելով անգամ, որ դրանից ազգայինը շնչահեղձ է լինում: Այնինչ իսկական արվեստագետի ցավն առավել խորանում է տեսնելով հոգևոր արժեքների խեղաթյուրումը, և լռելի դառնում է անհնար:

Ծշմարիտ արվեստագետին համարելով իր երկրի սահմանապահը՝ սիրված կոմպոզիտոր Ռոբերտ Ամիրխանյանը հանդգնած է, որ նա պետք է հղկի ժողովրդի ճաշակը, նրան մատուցի բարձրարժեք ստեղծագործություն, այլ ոչ թե փորձի հաճոյանալ նրան:

- Մարդն իր մասնագիտական կողմնորոշման հարցում դժվարությամբ է վերջնական մտքի հանգում: Բայց երբ ընտրել են արդեն, պետք է նվիրվես ու անընդհատ կատարելագործվես: Այսօր, ցավոք, մեր սերունդն այնքան էլ խորանուխ չի լինում այդ խնդրում: Խոսես մասնավորապես երաժշտության մասին: Երիտասարդությունն ինչ տեսնում է, այն էլ սովորում է: Եվ քանի որ հստակ պատկերացում չունի, թե ինչ է հայ երգը, հայերեն հնչող ամեն ինչ համարում է երգ: Հայ մշակույթը, հայերիս լսողական ընկալումները կողմնորոշվում են օտար երևույթներով, որոնք էլ խաթարում են մեր իրական դիմագիծը: Ապա փորձեք որևէ մեկին համոզել, որ մեր այսօրվա երգերի մեջ օտար տարր կա, բոլորը կսկսեն պաշտպանել: Ինչո՞ւ, որովհետև դրանցում իրենց մեջ սերմանված հաճույքների կոմպլեքսն է: Մեր մշակույթի մեջ այսօր սողոսկել է պատահականության ստորը: Ըուկան թելադրում է մեզ ցածրագույն կրթեր, որովհետև շատերի նպատակը միայն փողն է:

- Չե՞ք կարծում, որ այդչափ քննադատվող խորհրդային հասարակարգում, այնուամենայնիվ, ճիշտ էր մշակույթի ծրագրավորումը:

- Թերևս անհրաժեշտ է ծրագրավորված գումարներ ներդնել, որպեսզի մեր մշակույթի միջոցով աշխարհին ցույց տանք, որ մեր հասարակությունն առաջընթաց է ապրում: Այսօր մշակույթի շնորհիվ է, որ Հայաստանն աշխարհում դառնում է ճանաչելի: Մնացած բոլոր կարգի «բիզնեսներում» մենք կաշկանդված ենք: Միայն մշակույթի ասպարեզում ենք մենք ինքնուրույն, քանի որ պատմության խորքից եկող հիմք ունենք: Եվ հենց այս բնագավառում էլ անհրաժեշտ է նպատակային ներդրումներ կատարել:

- Ըստ ձեզ, ի՞նչ սկզբունքով է առաջնորդվում մշակութային քաղաքականությունը:

... Եթե, իհարկե, այն կա: Ուզում են հասկանալ, թե ինչի՞ համար է պետք մշակույթի նախարարությունը, ո՞ւմ են ձեռնադրել այդքան ուռճացված հաստիքները, որոնց

համար հսկայական գումարներ են ծախսվում: Թեև լավ է, որ աշխատատեղ կա, թող շատ լինի, սակայն եթե այդ գումարների 1 տոկոսն օգտագործվեր, օրինակ, դրամաշնորհների ձևով, արդյունքն անհամեմատ ավելին կլիներ: Այդ գումարները մեր բարեկեցության համար չենք ուզում, մի բան, որ հաճախ շատ սխալ է մեկնաբանվում: Մենք պետությունից ակնկալում ենք մշակութային գիտակցություն, օգնություն մեր ծրագրերն իրականացնելու հարցում: Բայց, ի պատասխան, կարծես կամայանիա է սկսվել կոմպոզիտորների միության դեմ: Ուզում են հասկանալ, թե ո՞ւմ է խանգարում մեր միությունը:

- Ասել է թե՛ մշակույթը պաշտպանության կարիք ունի:

- Անշուշտ: Մշակույթը նման է նոր ծնված երեխայի, որն աստիճանաբար գալիս է դեպի մարդը:

- Ինչպե՞ս եք վերաբերվում այն երաժիշտներին, ովքեր փողոցում եմ վաստակում իրենց հացը:

- Երաժիշտն իր հացը պետք է վաստակի որտեղ պատահի: Նա պետք է լինի թե՛ բեմում, թե՛ ռեստորանում, թե՛ փողոցում: Բազմաթիվ արվեստագետներ ու երգիչներ կան, ովքեր ռեստորաններում ծրագրեր են իրականացնում: Սա շփման մի ձև է: Մշակույթի գործչի համար բոլոր տեսակներն էլ ընդունելի են: Ի՞նչ ամոթ բան կա դրանում: Ինչո՞ւ փողոցում նկար կարող է վաճառվել, իսկ երաժշտություն ոչ: Ի դեպ, փողոցը սրբազան վայր է, դա մեր սիրահարությունների, էներգիա կուտակելու վայրն է: Իսկ ինչո՞ւ այնտեղ չի կարող հնչել լավ երաժշտություն: Արվեստագետի գլխավոր կոչումն այն է, որ նա ազդի մեկ ուրիշի հոգեկերտվածքի վրա: Առաջին քայլը դա է՝ գնալ դեպի մեկ ուրիշը. ոչ թե իր նվագելու համար որևէ բան ակնկալել ուրիշից, այլ նրան մի բան նվիրել՝ ուրախություն, հոգևոր խոյանք: Երաժշտությամբ զբաղվող մարդն արարում է, փնտրում է միջոց լսելի և ճանաչելի դառնալու համար: Երաժշտությունը պետք է հնչի նաև փողոցում, ուղղակի փողոցային երաժշտությունը փողոցային վարք է ենթադրում:

- Չգնահատված լինելու պատրվակով շատերն են լքում հայրենիքը: Դա արդարացիվո՞ք քայլ է:

- Իսկական արվեստագետը հայրենիքը չի լքի: Ուրիշի հողում չկա այն անհրաժեշտ էներգիան և չի էլ կարող լինել, որը սնում է արվեստագետին:

- Չե՞ք կարծում, որ այսօր շատ հեշտ է դարձել երաժշտություն հորինելը:

- Եթե մեկը երկու-երեք ծայն իրար կպցնելով ստեղծում է շահեկան մթնոլորտ, դա դեռ երաժշտություն չէ: Մեզ մոտ չի տրվում ճիշտ գնահատական, և չեն էլ կարողանում կամ չեն էլ փորձում քացն ու չորը տարբերել իրարից: Երբ մեկը մեղեդի է հորինում և մեջքը բաց այն ներկայացնում է հեռուստատեսությամբ, նրան կոմպոզիտոր են կոչում՝ առանց հասկանալու, որ իրական ստեղծագործողից նրանք դեռևս շատ հեռու են: Գիշտ այնպես, ինչպես ամեն գրչակ չի կարող գրող համարվել: Գրողը հյուսում է երկրի մշակութային ոստայնը և ոչ թե ոստայնի մեջ ճանձ է որսում: Այսօր ոստայն հյուսող մարդկանց ֆոնի վրա շատերը որսում են միայն սեփական շահը: Այնպես որ, երգ հորինող նորեկներին են կոմպոզիտոր չի համարի: Այսօր բոլորովին էլ դժվար չէ սխմեզատորի օգնությամբ, որի մեջ տեմբրային և արդեն պատրաստի հնչեղությունների հիմք կա, կոճակներ սեղմելով հորինել երաժշտություն: Նրանք հորինում են, իսկ են գրում են:

- Երբևէ կտեսնե՞նք այս աղավաղումների վերջը:

- Անշուշտ, այս ճանապարհը հերթական փորձություններից մեկն է: Երբ կազմակերպվեն ու անցկացվեն 70-ականների երաժշտության երեկոն, պետք էր տեսնել, թե մարդիկ ինչպիսի կարոտով էին լսում, որովհետև նրանց հուզում էր այդ երգերի մեջ եղած հոգևորը: Նրանք տեսան ու համոզվեցին, որ այդ երգերը մաքուր են, զուլալ, ջերմ, ագրեսիվ տարրերից զուրկ: Իմ սաներից մեկը հայ երգը հայ երգիչներից պաշտպանելու առաջարկ արեց: Ես համամիտ եմ: Անվերահսկելի վիճակն ու քննադատության պակասը մեզ հասցրեց այս վիճակին: Ամեն ինչի հիմքում պետք է լինի հակադրություն, երաժշտության ասպարեզում առավել ևս, որպեսզի կատեգորիա խոսանի առաջխաղացումը: Մշակույթի ասպարեզում ընդդիմության բացակայությունը ստեղծեց անբարո վիճակ:

- Այսօր երաժշտության բնագավառում նույնպես նկատվում է գրագողություն:

- Այո, մեր աչքի առաջ իրոք տեղի է ունենում այդ խաբկանքը, որը, ցավոք, դարձել է նորմա: Սակայն դա իր դրոշմն է դնում «երաժշտի» խղճի վրա: Նման ստեղծագործություններ, բնականաբար, երկար կյանք չի ունենան: Սակայն այս վիճակից դուրս գալու համար ժամանակ է պետք: Անհրաժեշտ է հասարակության ակտիվ վերաբերմունքը: Չեզոք մնալը սխալ է: Անճաշակ երաժշտության մասին, անշուշտ, պետք է գրվի թերթերում, դրան պետք է տրվի հասարակական գնահատական: Ցավոք, միայն սովոր ենք ասելուներով կառուցել մեր խոսքը, այնինչ այն պետք է կառուցվի եւ զորամա երկխոսություններ-

րի մեջ: Անհրաժեշտ է կազմակերպել հայ երգին վերաբերող քննարկումներ, որոնց արդյունքում կշահի երաժշտությունը:

- Պարոն Ամիրխանյան, առհասարակ ինչպե՞ս է ծնվում երաժշտությունը:

- Ու ոչ ոք չի կարող ասել: Հոգիս չեք կարող այդչափ մերկացնել, դա իր օրինաչափություններով ապրող հոգուս գաղտնիքն է: Միայն գիտեն, որ իմ երգերի մեջ երկու միատեսակ երգ չեք գտնի, նրանք բոլորն էլ տարբեր են, ինչպես փողոցի մարդիկ: Այնուհանդերձ, կասեն, որ նոր ծնվող երգը խմոր-

ման պրոցես է անցնում. ես այն դնում եմ մի կողմ, որոշ ժամանակ անց անդրադառնալով դրան՝ հեռացնում եմ ավելորդությունները: Տեսե՛լ էք, թե խնցուց մեջ ինչպես է առաջանում անարատ կարագը: Այդպես էլ երաժշտությունն է:

- Մշակույթի հանդեպ այս անտարբերության մթնոլորտում շատ շնորհալիներ են անտեսվում:

- Այդպես էլ պետք է լիներ: Շնորհալին ինքը պետք է ասպարեզ դուրս գա: Նման երիտասարդների համար ունևորները պետք է որ

բացեն իրենց գրպանները: Սակայն առայժմ մեր բնագավառում Մանթաշովների չկան: Ուստի կարծում եմ, որ շնորհալին չպետք է նստի ու սպասի, թե ինչ կանեն իր համար: Յուրաքանչյուրն առաջին հերթին իր ուժերով պետք է հաղթահարի արգելքները: Երբ նրա ջանքերին գումարվի հասարակության կարծիքը, դա նրան կարող է ավելի մեծ բարիք բերել, քան որևէ մեկի օգնությունը, ինչը «ստրկացնում» է մարդուն, գրկում անկախությունից:

Անուշ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՊԱՐՈՒՅՐ ՄԵՎԱԿ

1924 թվականի հունվարի 26-ին Վեդու շրջանի (այժմ Արարատ) Չանախչի գյուղում ծնված մանկիկը, որին ծնողները Պարույր կոչեցին, ապագա մեծ բանաստեղծ Պարույր Սևակն էր: Նրա ծննդավայրը նախ վերանվանվեց Սովետաշեն, իսկ այսօր կոչվում է Չանգակատուն: Մեծ բանաստեղծի ծննդյան օրվա առթիվ անցնում կրծատուններով ներկայացնում ենք Ալբերտ Արիստակեսյանի «Պարույր Սևակ» մենագրության «Մուտք»-ը և «Ղողանջ հիշատակի» ժողովածուից «Գրական անունը» հոդվածը, որը 1974 թվականին լույս է տեսել «Ավանգարդ» թերթում:

ՄՈՒՏՔ

Բազմադարյան պատմություն ունեցող հայ բանաստեղծությունն այնքան հարուստ է ստեղծագործական վառ անհատականություններով, գեղարվեստական խոսքի կոթողներով, որ մեր օրերում դժվար է արժանի կերպով կանգնել նրա խոշորագույն դեմքերի կողքին, նոր էջ բացել նրա «ոսկե մատյանում»: Դրա համար ոչ միայն բնատուր մեծ տաղանդ է հարկավոր, այլև ժամանակի սուր և խոր զգացողություն, գեղարվեստական մշակույթի բազմակողմանի իմացություն, ավանդույթների և համարձակ նորարարության զուգակցման կարողություն:

Պարույր Սևակը այդ հազվագյուտներից էր. նրա անունը մեկընդմիջտ մտնելու է նոր ժամանակների հայ բանաստեղծության երախտավորների շարքը: Նա մեկն էր իր իսկ երգած «մեծերից», ովքեր «ուշուշ են գալիս, բայց ոչ ուշացած, ծնվում են նրանք ճիշտ ժամանակին» և «նոր օրենք ու կարգ սահմանում», գեղարվեստական խոսքի նոր հորիզոններ բացում հայրենի մշակույթի զարգացմանը նոր ընթացք տալու համար:

Ուղիղ երեք տասնամյակ տևեց Պարույրի ստեղծագործական կյանքը, որ հազեցած էր բանաստեղծական նոր ուղիների անդադրում, խիզախ որոնումներով, հայտնություններով ու հաղթանակներով: Իր ճանապարհն սկսելով հայ և համաշխարհային պոեզիայի մի շարք դասականների անմիջական ազդեցությամբ, նա հենց սկզբից էլ ուներ նաև իր անկրկնելի ձայնը, մտքերի ու ապրումների աշխարհը: Այդ ինքնատիպը գնալով խորացավ, հստակվեց, դարձավ հայրենի բանավեստի մի ամբողջ թարմ հոսանք, ուր ամեն ինչ

կրում է բանաստեղծական հզոր անհատականության վառ և անքնքելի կնիքը:

Պարույր Սևակը շատ բան տվեց հարազատ ժողովրդին, մայրենի գրականությանն ու մշակույթին և դեռ շատ ավելին կարող էր տալ, եթե վրա չհասներ անսպասելի ու անհեթեթ մահը... Բայց ստեղծածով իսկ Պարույր Սևակն արդեն իրավունք ուներ իրեն տեսնելու այն մարդկանց շարքում, ովքեր իրենց գործով հարստացնում ու գեղեցկացնում են ժողովրդի հոգևոր աշխարհը.

**Ու երջանիկ է իսկապես,
Բախտավոր է նա միմիայն,
Որ դարավոր ճամփաների
Ինչ-որ մի նեղ խաչմերուկում
Ամենևին չփնտրելով,
Այլ ակամա-հանկարծակի
Չեզ մարդկության կորուստներից մեկն է գտնում
Արեգակի
Կամ իր աչքի մատնիչ շողի միջնորդությամբ:
Գտնում, սակայն չի թաքցնում,
Այլ տալիս է իր տիրոջը՝
Մարդկությանը,
Վերադարձնում նրա կորած գեղեցկության
Կամ բարության,
Ազնվության և կամ սիրո
Մի մշխարհը,
Մի մասունքը:**

Պարույր Ղազարյանը գրականություն մուտք գործեց Սևակ գրական կեղծանունով: «Կնքահայրը» արվեստաբանության դոկտոր-պրոֆեսոր Ռուբեն Զարյանն է եղել, որն այսպես է ներկայացնում բանաստեղծական անվան մկրտման պատմությունը:

ԳՐԱԿԱՆ ԱՆՈՒՆԸ

«Պատերազմի տարիներին խմբագրում էի «Սովետական գրականություն» ամսագիրը: Բանաստեղծների ծաղկեփունջը չկար, և բանաստեղծական այդ անլույս մեջ ինձ համար հայտնություն էին դեռ պատանի Պարույր Ղազարյանի բանաստեղծությունները: Բանաստեղծությունները, ոչ անուն-ազգանունը: Կարդալուց հետո մտածեցի ոչ միայն անմիջապես տպագրելու, այլ նաև գեղջուկ այդ բանաստեղծին մի իսկական բանաստեղծական անուն շնորհելու մասին: Եվ սկսեցի ասել՝ Պարույր Սևակ, Պարույր Սևակ: Չէ, լավ է հնչում: Այդպես էլ 42 թվականին 7-րդ համարում տպագրեցի նրանից մեկ, իսկ հաջորդ համարում՝ երեք բանաստեղծություն: «Փետրումներ», «Ձղջում», «Պատերազմի դաշտում զոհվածներին»: Եվ այսպես նա դարձավ Պարույր Սևակ:

- Իսկ ինչո՞ւ Սևակ, չէ՞ որ Ռուբեն Սևակը նույնպես հայտնի անուն է:

- Իսահակյանից մի պատմություն էի լսել. երբ Սիամանթոյին, Վարուժանին, Սևակին, մեր մյուս մտավորականներին տանում են դեպի իրենց կյանքի վախճանը, շեյխի աղջիկը հիվանդանում է: Սևակը, որ մասնագիտությամբ բժիշկ էր, բուժում է շեյխի աղջկան: Շեյխը կյանք է շնորհում Սևակին, բայց վերջինս մերժում է: «Իմ կյանքն այնտեղ է, - ասում է բանաստեղծը, - ընկերներիս հետ»:

Եվ ես ցանկացա, որ սպանված բանաստեղծ իր ազգանունով ապրի այս նոր բանաստեղծի մեջ: Եվ բանաստեղծ Պարույր Սևակը ասպետությամբ կրեց իր ազգանունը՝ Սևակ ազգանունը»:

Գ. Թովմասյան. «Ես սիրում եմ Լոռվա բնաշխարհը, բայց Լոռին գեղեցիկ է նաև հրաշալի մարդկանցով»

Փետրվարի 18-ին Վանաձորի կերպարվեստի թանգարանում բացվեց գեղանկարիչ Գեորգի Թովմասյանի հորելյանական անհատական ցուցահանդեսը, որին մասնակցելու էին եկել հարյուրավոր արվեստասերներ:

Բացման խոսք ասաց թանգարանի տնօրեն, գեղանկարիչ Փափագ Ալոյանը նշելով, որ ներկայացված աշխատանքները Գ. Թովմասյանի ստեղծագործական կեսդարյա արգասաբեր գործունեության արդյունք են (նրա շուրջ 1,5 հազար կտավներից ցուցադրված էին 106-ը): Փ.

Ալոյանը հակիրճ անդրադարձավ վանաձորյան կերպարվեստի պատմությանը:

- Ուզում եմ ջերմ խոսքեր ասել իմ լավագույն բարեկամի, ճանաչված գեղանկարիչ Գեորգի Թովմասյանի մասին, ով 50 տարի շարունակ իր վրձնով, իր հարուստ ներկայակալով մեր բնության իրաչքերը կտավին է փոխանցել, որոնք ժողովրդի հարստությունն են դարձել ոչ միայն Հայաստանում, այլև արտասահմանում, - շնորհավորելով 70-ամյա հորելյանի առթիվ ասաց



«ԳՆԱՑԵՔ ՀԱՅԱՍՏԱՆ. ԱՅՆՏԵՂ ԱՐԴԵՆ ԼՈՒՅՍ ԿԱ»

Ամերիկահայերը չեն ուզում ԱՄՆ-ում տեսնել նոր եկած հայաստանցիների

ԱՄՆ Մինեսոտա նահանգն ունի 6 միլիոնից պակաս բնակչություն: Որոշ տվյալներով՝ հայերի թիվն այստեղ չի անցնում 1000-ից՝ մոտ 400 ընտանիք: Նրանց մոտ 70 տոկոսն արդեն 2-րդ կամ 3-րդ սերնդի մարդիկ են, և մեծ մասամբ՝ խառնուրդ: Այս 1000 հոգուց միայն 5-7 տոկոսն է խոսում հայերեն:

«Մինեսոտան ԱՄՆ-ի հայաշատ նահանգներից չէ, և ես կարող եմ պատասխան տալ այնտեղ եղած գրեթե բոլոր հայերի համար. նրանցից ոչ մեկը չի զբաղվում անպատվաբեր գործով, ինչպես որոշ այլ հայաշատ նահանգներում կամ եվրոպայում: Հաճախ ենք լսում, որ հայերը գնում են արտասահման և նրանց հիմնական զբաղմունքը դառնում է գողությունը: Այս նահանգում նման բան չկա», - ասում է մեր գրուցակից Արթուր Հակոբյանը՝ Մինեսոտա նահանգից: Նա արդեն 7 տարի է, ինչ բնակվում է այստեղ: 1995-ին «Մասքի» ծրագրով մեկնել է ԱՄՆ սովորելու, ստացել է իրավագիտության մագիստրոսի կոչում և 1996-ին վերադարձել հայրենիք: Հետո բախտի բերմամբ, թե պատահամբ՝ 1999-ին «Գրին քարտ» է շահել ու մեկնել աշխատելու: Ա. Հակոբյանը իր հիմնական մասնագիտությամբ իրավաբան է: Սակայն ունի և երկրորդ մասնագիտություն՝ թարգմանիչ: Նա մշտական բնակության համար ընտրել է Մինեսոտան, Միննեապոլիս քաղաքը՝ իր բնակլիմայական պայմանների ու հատկապես գեղեցիկ բնության համար (ի դեպ, այստեղ կլիման բավական սառն է, ի տարբերություն շատ այլ նահանգների, ուր հիմնականում ձգտում են բնակության գնալ հայերը): 1999-ին նահանգի հայերը մեկնել են առաջին հայի Մինեսոտա գալու 100-ամյակը: Երկու էլ այդ հայերն իրենց հայկական ազգանունը չեն պահպանել, հիմա նրանք Բելջիքներն են, ովքեր արևելյան գորգերի վաճառքով են զբաղվում: Նահանգի մոտ 1000 հայերից, ըստ մեր գրուցակցի, մոտ 200-250 հոգուն կարող են տեսնել տարին մեկ անգամ հայկական եկեղեցում՝ Նոր տարվա և Սուրբ ծննդյան տոներին: Այս 200-250-ից մոտ երեսունհինգը բավական ակտիվ են, և ավելի հաճախ են երևում պատարագների և եկեղեցում կազմակերպվող այլ միջոցառումների ժամանակ: «Մնացածը կան պարզապես հեռախոսագրքում՝ յան ազգանունով: Տասնյակ տարիներ առաջ մի քանի հայեր այստեղ ստեղծել են «Մինեսոտայի հայկական մշակութային կազմակերպություն»՝ հ/կ-ն հայերին համախմբելու նպատակով: Բայց մինչ այսօր նրանց նպատակն այդպես էլ չի իրագործվում: Ունենք նաև հայկական պարային խումբ, որը, սակայն, մոտ 70 տոկոսով ոչ հայերից է բաղ-

կացած»:

Մինեսոտայի հայկական եկեղեցին 4 տարեկան է: Այս տարի այն պաշտոնապես դարձել է արևելյան թեմի մի մասը: «Նախկինում եռամսյակը մեկ տարածք էինք վարձում ուրիշ եկեղեցում՝ պատարագներ մատուցելու համար: Եկեղեցու կիսանկուղային հարկում ունենք մի քանի մեծ ու փոքր սրահներ: Ամեն տարի հունվարի առաջին օրերին ճաշկերույթ է կազմակերպվում: Ժամանակ առ ժամանակ միջոցառումներ լինում են:

ԱՄՆ-ում հայկական եկեղեցիներում համայնքն է պարտավոր ֆինանսապես ապահովել քահանային, և մենք դեռ չունենք մշտական քահանա, հուսով ենք, որ շուտով կունենանք: Որոշ առումներով Մինեսոտայի հայկական եկեղեցին ավելի շատ մշակութային ակունքի դեր ունի: Այն համախմբում է մի խումբ հայերի՝ թեմիսի, բիլիարդի սեղանների շուրջ: Հաճախ, մինչ այդ խաղերին անցնելը, հենց այնպես հանդիպում ենք եկեղեցում ու տարբեր թեմաներով գրույցներ վարում կամ կինոնկարներ դիտում: Մի խոսքով, ամեն ինչ արվում է, որ հետաքրքրություն ստեղծվի դեպի հայկական եկեղեցին, որպեսզի այն բոլոր մարդիկ, ովքեր իրենց հայ են համարում, գան այնտեղ: Ես ոչ մի վատ բան չեմ տեսնում, որ եկեղեցում խաղեր էլ են կազմակերպվում: Ժամանակ առ ժամանակ մույնիսկ հայտարարություններ ենք տալիս, զանազան մրցույթներ կազմակերպում (օրինակ՝ մարդու կամ շախմատի) քաղաքում և դրանից դուրս բնակվող հայերին համախմբելու համար, բայց շատ քչերն են արձագանքում»:

Հայության մեջ, մեր գրուցակցի ներկայացմամբ, հետաքրքիր բաժանում է կա: Մի կողմից շատ են պասիվ հայերը, որոնց «յան»-ով ազգանունները հեռախոսագրքերում կան, իսկ կյանքում ոչ: Կան նաև այնպիսիք, որոնք միայն 25 տոկոսով են հայ, սակայն հպարտությամբ են խոսում այդ մասին ու հոգով ավելի շատ հայ են, քան գտարյուն հայերը: «Կան հայեր էլ, ովքեր կան ծնվել են ԱՄՆ-ում, կամ տասնամյակներ առաջ են ԱՄՆ գաղթել և ունեն հետաքրքիր վերաբերմունք՝ վերջին տարիներին գնացածների հանդեպ: Վերջիններս նրանք վերաբերվում են ոչ այնքան իբրև իրենց հավասար հայերի, այլ ամերիկացու պես՝ նախկին սովետական միությունից եկածների: Նրանք հոգու խորքում դեմ են, որ գնաս այնտեղ: Կարծես թե վախենում են, որ նորեկներս ինչ-որ կերպով իրենց վաստակած դիրքերին վնաս ենք հասցնելու: Ես կիսակամայի, եթե այդպես վերաբերվեին թափփուկներին, ովքեր, օրինակ, գողությամբ կամ այլ

ոչ պատվաբեր գործերով են զբաղվում: Իսկ իմ նահանգում չկա որևէ մեկը, որ կզցի հայի պատիվը: Այդ առումով ցավալի է նկատել որոշ ամերիկահայերի այն դիրքորոշումը, թե՛ թող չգան այստեղ, թող մնան Հայաստանում, այնտեղ արդեն լույս ու ջուր կա: Հատկապես նրանք, ովքեր գալիս են Հայաստան, գործ են դնում, մի քանի աշխատատեղ ստեղծում, կարծում են, որ Հայաստանում զբաղվածության հարցը լուծել-արծել են: Նրանք երևի թե տեղյակ չեն, որ մարդու՝ ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունքը միջազգայնորեն ճանաչված համընդհանուր իրավունքներից մեկն է, և ԱՄՆ-ն իրենց հոր երկիրը չի ու իրենք չեն որոշելու, թե են Հայաստանում կմնան, թե՛ ԱՄՆ կգան, անկախ նրանից, թե Հայաստանում վիճակն ինչպիսին է: Բացի այդ, նրանք մոռանում են, որ չէին լինի այդ մեծ հնարավորությունների տեր մարդիկ, եթե ԱՄՆ-ում ծնված կամ երկար տարիներ ապրած չլինեին: Գուցե վախենում են, որ իրենցից ոչ պակաս խելացի ու հաջողակ գտնվենք ու նախանձո՞ւն են, որովհետև վերջին 10-15 տարիների եկածները նախկին խորհրդային ուժեղ դպրոցի սաներն են: Հրեաները, օրինակ, չեն դատապարտում ոչ գնացողներին, ոչ էլ եկողներին: Նրանք ուր գնացել են՝ իրենց գտել ու ամրապնդվել են, ու հիմա նրանց գործերը շատ ավելի լավ են, քան հայերինը: Այսօր ԱՄՆ-ն մեծապես հովանավորում ու աջակցում է Իսրայելի պետությանը, քանի որ ԱՄՆ-ում կա հզոր հրեական համայնք, իսկ այդ համայնքը բաղկացած է միայն սերունդներ առաջ ԱՄՆ գաղթած հրեաներից, այլ շարունակաբար սնուցվում ու թարմացվում է նորեկների շնորհիվ, որոնց եթե չեն օգնում, ապա գոնե չեն էլ վաճում, թե՛ վերադարձի Իսրայել, այնտեղ կյանքն արդեն թեթևացել է»:

Ա. Հակոբյանը գոհ է, որ սահմանադրական փոփոխություններով հանվել է երկքաղաքացիության արգելքը: «Հայաստանում շատ խելացի իրավաբաններ կան, ովքեր կարող են համապատասխան օրենքներ մշակել՝ որոշակի ցեմզեր սահմանելով քաղաքական կյանքին մասնակցելու առումով: Անձամբ ինձ համար Հայաստանի քաղաքացիությունն պահպանելը ավելի շատ բարոյափոխաբանական, սենտիմենտալ հարց է, ինչի պատճառով մինչև օրս ԱՄՆ քաղաքացիություն դեռ չեմ ընդունել, թեև վաղուց կարող էի և դա տեխնիկապես շատ կիեշտացներ իմ կյանքը ԱՄՆ-ում ու նաև արտասահման ճանապարհորդելիս»:

Հասնիկ ԲՈՒԴԱՂՅԱՆ

Աղասի ԱՅՎԱԶՅԱՆ

ՀԱՅ ԳՐՈՂԸ



1909 թվականի մայիսի 7-ին, Թիֆլիսի միջակ բուրժուա Մելիք-Նուբարովի նախարարի բազմաթիվ ստեղծել էր հայտնի հայ գրող... Եկեք ամուռը չտամ, որովհետև նա շատերից մեկն էր, ներողություն, ավելի ճիշտ կլինի ասել՝ ընտրյալներից մեկը, որի ճակատագիրը ոչ մի բանով չէր առանձնանում մնացած հայ գրողների ճակատագրերից: Տիրոջ կինը գնում-գալիս էր նրա առջև՝ ցուցադրաբար անտեսելով նրան, սակայն ամբողջ իր կեցվածքով բողոք կրելով նրա ներկայության դեմ: - Նա էլի՞ նստած է... - հարցրեց Մելիք-Նուբարովը կնոջը: - Նստած է, - շուրթերը ծռելով արտաբերեց կինը: - Կյանքս կերավ... Ձգվեցրեց... Փո՞ղ, փո՞ղ, փո՞ղ... էլ ուրիշ բան չի իմանում... - Ի՞նչ անենք, - հարցրեց կինը: - Թող նստի-նստի, կհոգնի ռադ կեղնի... - Նա ռադ եղևողը չի: Մելիք-Նուբարովը կոպերը իջեցրեց աչքահատերի վրա, ինչը նրա հոգնածության աստիճանի չափորոշիչն էր: - Ախր գոնե ներքնապես երախտապարտ լինի... Թե չէ՛ ամեն անկյունում բամբասում է... Բոլոր հայ գրողները եղպես են... Քի՛չ է, քի՛չ է, քի՛չ է... Ինչքան

էլ տաս՝ էլի քի՛չ է... Որոշ ատեն ամուսինները անելանելի լռության մեջ էին, հետո կինը տհաճությամբ դուրս մղեց իր շուրթերից. - Ի՞նչ են գրում... Ծանո՞թ ես... Ո՞ր են գնում մեր դրամները... - Ո՞վ է կարդում... էլ բանուզործ չունեն... - Ժողով... - դիմեց կինը, - ծառային ասենք՝ թող միջոց գտնի նրան մի կերպ դուրս հրավիրելու... Նա յուրային է և կարող է հարաբերվել իրենց ոճով... - Գոքո՞րը... լավ են մտածել... - աշխուժացավ ամուսինը: - Կանչիր Գոքորին... Կինը զրնգացրեց ձեռքի գանգը... Գոքորը ուշանում էր: Նորից թափահարեց գանգը: Գոքորը նորմեն չերևաց: - Վո՞տ նաչի ամոյանե... - թքելու պես արտասանեց կինը: - Թամբալ են... - Գոքորո՞ր... - գոռաց Մելիք-Նուբարովը, - Գոքորո՞ր... և Գոքորը երևաց: Մելիք-Նուբարովը գոհ մնաց ազգային հոգեբանության իր իմացությունից: «Տեսա՞ր, ինչպես է պետք... Քաղաքակրթության լեզուն դեռևս անհասկանալի է մերոնց համար», - ասում էր նրա ժպիտը: Կինը ըմբռնելիության ժպիտով արձագանքեց ամուսնուն: 1912 թվականի հունվարի 4-ին, Մելիք-Նուբարովը այցելեց մեծահարուստ Թուրքիայի Փարիզում գտնվող նրա գրասենյակում: Ընդունարանում, օ՞ գարմանք, նստած էր հոգեառ Յայ գրողը: Գլխով մի թեթև բարևելուց հետո, Մելիք-Նուբարովը մտավ Թուրքիայի առանձնասենյակը: - Նա էլի նստած է... - դեռ կարգին չգիտակցելով մտնողի ով լինելը, հարցրեց Թուրքիայի: «Ո՞վ», ուզում էր ընթացքից հարցնել Մելիք-Նուբարովը, սակայն հարցը հերթապահ էր, իսկ Մելիք-Նուբարովի ներգո մեխանիզմը

արդեն գործի էր դրված և դուրս մղեց պատասխանը. - Նստած է... - և տեսնելով Թուրքիայի տառապալից հայացքը, համերաշխության համար կարեկցանքով ավելացրեց. - Անաստվածը... Նստել էին իրար դիմաց, իրար էին նայում, և գործի մասին խոսակցությունը հետաձգվել էր ինքնաբերաբար: Մելիք-Նուբարովը, չսպասելով Թուրքիայի հարցին, որ պիտի լսեր. «Ի՞նչ անենք», և միանգամից առաջարկեց. - Ծառադ ֆրանսիացի՞ է... Թուրքիայի գլուխը տմբսմբացրեց: - Ասա՛ թող նա զբաղվի այս խնդրով... Ֆրանսիացիները նրբանկատ են, քաղաքավարի, դիմայակ... Նրանց «չէ»-ն «հա»-ի արժեքն ունի... Դեռ մի բան էլ շնորհակալ կլինի մեր Յայ վարժապետը... Թուրքիայում աշխուժացավ, սեղմեց էլեկտրական գանգի կոճակը, և ֆրանսիացի ծառան՝ Գաստոնը, մեկ վայրկյանում տնկվեց նրա կողքին... - Գաստոն... - թեթևացած արտաբերեց Թուրքիայը և, չգիտես ինչու, սկսեց ծիծաղել... նրան հետևեց Մելիք-Նուբարովը... Ծիծաղող տարածվեց ընդգրկելով սենյակը ու նաև Գաստոնին: Յայ գրողի ականջին հասավ հարևան սենյակից լսվող ծիծաղը, և նա էլ մեխանիկորեն միացավ ընդհանուր խնդրեփն... «Պիտի որ գործերը հաջողվեն... Ծիծաղող դրա նշանն է... Ուրախ մարդիկ հեշտ են բարեգործություն անում...» այս բառերը շարվեցին Յայ գրողի ուղղաբնի՝ երջանկության նկատմամբ ամենազգայուն հատվածում:

Լևոն ՋԱՎԱԽՅԱՆ

ԻՄ ԿՐՈՆԸ

- Արա՛, ես ի՞նչ ք բու հալը... Հլա քու ջանին, չանիդ տակի բոխոխին, լեմիռակ թշերիդ, տուլմա քթիդ, դամբլապառ թերանիդ, շլնքաքոբիդ ուռած մսերին, փթռակ գերան կրեմերիդ... Արա՛, էսենց գրող և լինո՞ւմ... Բա հլա ցից փորիդ, փորիդ՝ ուր որ ք քթիդ կդիպչի... Քամակիդ ծալերի մասին էլ չեմ խոսում... Արա, ամոք ա, ամոք, բա գրողը էսենց և ըլնո՞ւմ... Քեզ գլուխդ և կառավարո՞ւմ, թե՞ բերանդ: Վերջապես, դու գրո՞ղ ես, թե՞ շլնքամիս... Չէ՛, ախպեր, դեմքդ գրողի չի տառապանք չկա, տառապանք... Եթե ուզում ես գրողի տեսք ունենալ, մարդիկ էլ ուզենան գրվածքներիցդ բացի մեկ-մեկ էլ երեսիդ նայեն, ուրեմն ականջ արա ժողովրդական խոսքին. «Առավոտվա հացը մենակ կեր, կեսօրին՝ կիսի ընկերոջդ հետ, իրիկունը՝ տուր թշամանուր...»:

Էդպես ամեն հանդիպելիս, հատկապես փորիս թմբուկին դիպչելիս մորմոքվում է Գվորդն ընկերս ու ասես գելի գլխին ավետարան կարդալու. Գա իրենց էր ատում, ես՝ իմը, թե շուտ արա, ոչխարը սարմ անց կացավ... Որ հետո հացը նորից չամփ անեն ու էլի համփ անեն... Ի՞նչ անեն, հարազատ

ընկերոջս ո՞նց բացատրեմ, որ ես սովորական գրող չեմ, որ ես անընդհատ գարգացող գրող եմ. կար ժամանակ, որ երկայնքին էի աճում, հիմա՝ լեմքին... Ամեն դեպքում, կյանքումս իմ տեսքով հպարտացած չկամ: Չեմ էլ կարծում, թե որևէ մեկը ինձանով հմայվել է, բայց երբ թերթերում առաջին անգամ տեսա պրեզիդենտի լուսանկարը, ինքս աչքիս էնքան բարձրացա, էնքան բարձրացա, որ ասի՝ թե մեր երկրի թագավորը սա է, ապա մեր ժողովրդի աստվածն էլ ես եմ, որ կամ: Վերջ ի վերջո՞ «Մարդ ապրի ոչ միայն հացիով, այլ բանիով Աստոյ»։ Եթե նա մեր հացը կտրում է, ապա ես ոչ թե կտրում, այլ ավելացնում եմ «բանիով Աստոյ...» Դրա համար պիտի ուրախանալ: Սակայն իմ գրածանաչ ընկերներիցս ոմանք, ընդհակառակը, տղիքում են: Տխրում են ոչ միայն գրիս ու շնորհքիս համար, այլև դավանածս հավատքի համար: Իմ հավատը մարդկանց սրտեր է շարժում: (Լեռները թող առայժմ կանգնած մնան): Եթե գրիդ հավատացող չկա, ապա քո խոսքը դատարկ կրակոց է բաց երկնքում: Ես ոչ միայն գրում եմ... Ես

իմ կրոնն եմ ստեղծում: (Ես՝ բազմամեղաս, մեղա, մեղա քեզ, Աստված...): Նախկինում, երբ ես չէի գրում, բայց կարդում էի՝ առաջին բանը, որ ինձ վանեց ժամանակակից հայ գրողների ստեղծագործություններից, սուտն էր: Կարդում էի ու չէի հավատում, թերթում էի ու դեմ առնում կեղծիքի. կեղծ էր հայրենասիրությունը, ազնվությունը, բարիությունը, մարդասիրությունը, սերը, նվիրումը, կարեկցանքը և վերջապես կերպարներն ու նկարագրությունները... Կեղծ էր, կեղծ էր, զգվելիորեն կեղծ, դրանց գահլեն գնա՛՛ էնքան էլ անտաղանդ... Դեռևս բար, երբ գրել սկսեցի, ջանացի նախ գրել անկեղծ, որպեսզի խոսքս հավատ արեշնչի: Եվ քանի որ չէի կարող ուստա գրողի պես ստել այնպես, որ ինձ հավատան, ձեռքս դրի խղճիս դավթարին ու երդվեցի ասել միայն ճիշտը, միայն և միայն ճշմարտությունը... Կարելի էր, չէ՞, նաև այդպես գրել: Եվ ինձնից անկախ համագամանքներում, կամա թե ակամա, իմ գրություններում հեղինակը և հերոսը միանուլվեցին, դարձան մի կերպար,

որին անհնարին էր չհավատալ, քանզի նրա խոսքը ստուգված էր կյանքով:

Այդպես իմ կրոնը ձեռք բերեց առաջին հավատացյալին, հետո երկրորդին, երրորդին... առջ քերելով շրջապատի տարակուսանքը: Դրա համար իսկական ընկերները չեն վիատվում: Միգուցե, ընկերը մահ մահ է, որ քեզ նույնիսկ չի ճանաչում: Ընդամենը նա քեզ գիտի և լուր հավատում է քեզ: «Երանի նրանց, որոնք առանց տեսնելու են հավատում»: Այդպես Բերգման էր հավատում Տարկովսկուն, թեև իր ողջ կյանքում նրա ձեռքն իսկ սեղմած չկար: «Ես միշտ երագել եմ, - ասում էր նա Տարկովսկու մասին, - գնալ դեպի այն մոզական դուռը, ձգտել այդ դռնից ներս մտնել... Իսկ նա այնքան ազատ էր գգում այդ դռնից այն կողմ...»: Այդպես են գրում մեծերը: Մեծերը՝ մեծերի մասին: Այս տողերի արանքում կարող են լուծվել և Սալիերին, և Մոցարտը: Այս տողերից է սկիզբ առնում աստվածային մեղեդին: Դա մարդկային սրտերի միացման կիզակետն է: Բայց այս ամենի հետևից կապ ունեն: Ո՞վ եմ ես, որտեղից եմ գալիս և ո՞ր եմ գնում և որ անկենսականորեն է ինչո՞ւ եմ գրում: Ժամանակն այս հարցը տվել է մահ Ռամոն Մաթևոսյանին: Եվ գիտե՞ք, թե ինչ է պատասխանել: Ոչ ավել, ոչ պակաս, ասել է, թե գրում եմ, որ Նորբյան մրցանակ ստանամ: Հարցնողն էլ ո՞վ էր մի հայտնի ռուս գրող, որ Հայաստանով եկել հասել էր խորտկարան: «Էն մյուս օրը, - ծիծաղելով պատմում էր Յարանդը, - Հայաստանի գրողների միությունում էնպես էին խառնվել, էնպես էին խառնվել, որ ասես էդ մրցանակը իրենք էին տալու»: Ես դժվար հարցի տակից եղպես կատակով էր դուրս եկել մեծ գրողը: Բա ես ի՞նչ ասեմ... Առջև ռուս չի՞ օղու բաժակը ձեռքին, որ մի շուկուր էլ ես անեմ: Առջև հիշաչար, լուրջ, սպիտակ թուղթ է: Ուրեմն, մինչ այս հարցին պատասխանելը մի քիչ էլ ետ գնամ: Ինչո՞ւ եմ ես ծնվել... Հա, հա, հատկապես ես: Բայց ինձ հարցնողն ո՞վ էր... Հերս ու մերս իրար սիրել են՝ արանքում ես եմ շահել: Բա գրե՞լը, գրե՞լը... Հարցը կրկորդիցս բռնել ու բաց չի թողնում: Հարգելի՛ ընթերցող, դա էլ է եղել ինքնաբերաբար. ես ու փառքն էլ իրար ենք սիրել ու արանքում շահել եք դուք: Թե չէ իմ պես անբախ-գամբախ գրող ձեզ ո՞վ էր սովորը... Սերը, սերը, սերը կասեր իմ ծախսն ու հավատը, որ մարդկային սրտեր է միացնում: Տասնամյակներ առաջ հին Հայաստանում «Սկվազնյակ» անունով մի կաՖե կար: Սյունագարդ, բաց կամարակապ տարածք էր: Հովր էն կողմից տալիս՝ էն կողմն էր անցնում: Ունայումս սուրճ էինք խմում և ուշ դնում, թե Ֆելիքս Անիմա՞լու տիեզերածավալ ու անհասկանալի մտքերը ո՞նց են մեր միականցից մտնում ու մյուսով դուրս գալիս: Սկվազնյակ մի ասա՝ մի բուլ ու բորան ասա. քամի էր, որ անում էինք: Հետագայում էդ կաՖե տերը մեզ վրա լուրջ մեղադրանք բարդեց: Ասում էր՝ ես երկրի քանդողը դուք եք... Սաղ դուք քանդեցիք... է, մեկը խոսում էր, մյուսներով լսում էինք՝ էլ եղավ քանդե՞լ... Մեզ ամենից շատ խելք էր սովորեցնում Ֆելիքս Անիմա՞լին, թեև առանձնապես ոչ մեկս նրա վարդապետությամբ կարոտ չէինք:

- Էդ որտեղից գիտես, է՞, որտեղից... - նրան ոչ մի կերպ չէր հավատում օղորմածիկ Չաղ Ֆելոն:

- Էնտեղից, - մատը ատրճանակի փողի պես վեր էր տնկում Ֆելիքս Անիմա՞լին:

- Բա մենք ինչի՞ չգիտենք:

- Տգետ եք, սիրելիս, չեք հասկանում, սիրելիս, չեք հավատում, սիրելիս..., - իր աստվածային բարձրունքից խղճահարությունք մեզ էր նայում Անիմա՞լին:

- Վերկից նայելը ո՞րն է..., - վիրավորվում էր դուրսո՞ր-պրոֆեսոր Չաղ Ֆելոն:

- Ջորջ Գորդոն Բայրոնը, - ասում էր «նայելով», - Լորդերի պալատում լորդերին ճկույթով էր բարևում:

- Հետո ի՞նչ...

- Բարձրերին բարձրից պիտի նայես, ցածրերին՝ ցածրից, - ասում, ասես ողորմում էր Ֆելիքս Անիմա՞լին:

- Էդ որտեղից գտար, - կատեց Չաղը:

- Էնտեղից, - էլի ատրճանակի փողի պես մատը վեր էր տնկել Անիմա՞լին:

- Արա՞, էն ա սաս՝ Աստված ես, էլի... Հիսուս Քրիստոսից դու էլ ինչո՞վ ես տարբերվում, - հեզգնել ուզեց Չաղը:

- Հիսուս, - ասաց Ֆելիքս Անիմա՞լին, - մարգարիտները խոզերի առաջ չէր սղփռում, իսկ ես սփռում եմ..., - ու մեծահոգաբար ժպտում էր Ֆելիքս Անիմա՞լին:

- Դե, հրաշք արա, հրաշք..., - ոչ մի կերպ նրա աստվածողությունը չէր ուզում հավատար Չաղ Ֆելոն:

Անիմա՞լու գրույցն ինչո՞ւ հիշեցի: Ինչո՞ւ մոռացության փողոց տակից սրբեցի, դուրս քաշեցի այս պատմությունը: Կարող է չէ՞, մի Չաղ Ֆելոն էլ ինձ ասի, որ կրոնից, սիրուց ու հավատից ես խոսում, դե, մի հրաշք էլ դու արա... Դուք իմ սիրահոժար ընթերցողներն եք, դուք էլ հո Չաղ Ֆելոն չեք, որ ինձ տուայիկը կոխեք: Հապա մի նայեք թերթի վրա շարած մարգարտաշար տողերիս. կաթիլ առ կաթիլ կյանք է հոսում նրանց միջով: Մարգարիտ է, կյանքի խորհրդից հանած մարգարիտներ, որ անհատույց շաղ են տալիս ժողովրդիս առաջ: Բա սա հրա՞շք չէ... Չէ՞ որ կյանքում ավելի մեծ հրաշքներ են տեղի ունենում, քան երագում: Ես որ գրում եմ՝ ապրում եմ, որ չեմ գրում՝ համարյա թե չեմ ապրում. խոտ են դառնում ու արծաթ ծախում: Ի դեպ, դա էլ վատ գործ չէ. փողը երկրից ես գալիս, փառքը՝ երկնքից... Այսպես էլ ապրում ենք՝ յուրօրինակ և տարօրինակ... Խնդիրը «բանիվ» ապրելու մեջ է: Եվ քանի որ ավելի շատ չեմ գրում, քան գրում եմ, հետևաբար, քիչ եմ ապրում: Հունվարի 6-ը այդպիսի մի մեռած օր էր: Գլուխս դատարկ էր, ո՞նց որ ավլած կալ: Շաքարահամումս մի կենճի անգամ չկար: Վեր կացա՞՞ փուչիկի պես գլուխս ուսերիս վրա օրորելով, գնացի Ջատիկ: Արդեն իրիկուն էր, երբ հասա Սուրբ Ջորավոր: Եկեղեցին փակ էր, բայց ցածում գետնահարկ մի մատուռ կար, որտեղից լույս, կնդրուկի և այրվող մոմերի բույր էր գալիս: Բաց դուռ էր: Ծունկի իջա, աղոթեցի: Հետո եկա տուն, գլուխս դրի բարձին, որ ննջեմ, բայց քունս չտարավ: Գիշերվա ժամը երեքը կլիներ: Մեկը կողք բզեց, ասաց՝ էլ, ինչ կասեմ, գրի՛ առ: Փառքը շատ, Տեր Աստված... Բարձրալի ինձ հղիացրել էր գրի բերկրանքով: Այրելու ժամը եկել էր: Հիսուսի ծնունդը ծնունդ էր տվել մի այլ կյանքի՝ «Իմ կրոնին»: Ջարմանալիորեն, օրվա խորհուրդը վերնա-

գրի մեջ էր: Բա սա հրա՞շք չէ... Կարող է, չէ՞, այդ օրը քնած մնայի... Կարող է և ընդհանրապես չարթնանայի... Հրաշքը հրաշքի մեջ չէ, կյանքի մեջ է, կյանքը վերստին նորոգելու մեջ է: Հին տարին անցավ, բայց Նորը ամենակն էլ մորի մեջն էր. փողոցներն անգարդ էին, դեմքերը՝ հոգնած, հայացքներն՝ անժպիտ, սրտերը՝ կոտրած, ու լույս չկար մարդկանց աչքերում... Խավար էր ու մոլոր մեր ազգի ճամփեն...

Պաղ օրի մեջ լիալուսնի արծաթյա սփորից խակ կաթի պես պղտոր լույս էր ծորում: Պարզապես գիշեր էր: Ցուրտը սողսկուն էր մարմինս: Բաճկոնիս տակ ոսկորներս շխկշխկում էին: Արվյան փողոցում Գեղագիտության ազգային կենտրոնին կից, տուֆակներ տեղի կամարակապ խորշում էլի նա էր մի ոտանի այն մարդը: Փայտյա հենակները փռել էր քարե սանդղակին ու պառկել: Այս էլ որբերող Նոր տարին նա անց էր կացնում նույն տեղը՝ բաց երկնքի տակ, պաղ քարի անկողնում: Ձմեռը խիստ ցուրտ կանի, սառնամանիքը ապակեփակների վրա ամառայա եղևնիներ կնկարի ու կնախշազարդի սառը ծաղիկներ, և բուքը կծծի դուռ ու լուսամուտ: Իսկ դա նրան պետք էլ չէ: Իր քարե անկողնու միջից ծուլ-ծուլ կնայի փողոցի աստղադարձին, բարձրերում մարմնող աստղազարդ գմբեթին, կընդարմանա ու կիսախուսի աչքերով կնկրի իր քունը: Նրա տունը աշխարհն է: Կորցնելու բան չունի: Միայն թե երկինքը փուլ չգա: Խուլ մռռան մեջ նորից ուրվականների պես մուրացկաններ են վրտում: Չգիտես՝ որ մեկի համար ձեռքը գրպանը տանես: Իսկ պետության գրպանը ծակ է: Ու՞ր ենք գնում մենք, ո՞ր է գնում երկիրը... Իմ հավատը հազիվ ինձ փրկի, իսկ մյուսներին... Սա և՛ իմ երկիրն է, և՛ իմ չէ, իմ հայրենիքն է և իմ չէ, իմ օթևանն է և իմ չէ... Ես հեռանում եմ այս երկրից, հայրենիքից, օթևանից, որպեսզի նորից ետ դառնամ, ինչպես անցնող և դարձող տարիները: Ես վերստին աշխարհ են գալիս իմ պատմվածքներով: Ես հավատում եմ իմ վերադարձին: Սա է իմ կրոնը: Կրոնից էլ եմ, որ երկու երեկեր մի տեղ է լինում: Ցանկացած նա է, որ իմ ուզած մարդը կամ, որ ավելի ճիշտ է, ազգիս ուզած մարդը դառնա պրեզիդենտ, ու ես նրա մոտ մենք գրող աշխատեն:

- Ո՞վ է նա... ո՞վ է նա... ո՞վ է նա..., - խմբերգում են միտինգներում:

Ասում է, Գորդոնի միություն կոնֆերանսի ընդմիջմանը ճեմասրահում Կարեն Դեմիրճյանը հանդիպել է նոր-նոր անուն հանած Հրանտ Մաթևոսյանին և ասել.

- Կգա ինձ մոտ:

- Չեզ մո՞տ..., - զարմացել էր Հրանտը:

- Ինչի՞, դու էլ մոտ ունեն... - զարմանալու հերթն արդեն Դեմիրճյանին էր:

Ես հեռատես գրող եմ: Ես հիմնկվածից նրան եմ մոտի-մոտի անում, ով արդար ընտրությամբ է «մոտ» ունենալու: Սակայն հիմնականում մոտ, մոտ եմ կանչում իմ Աստծուն: Եվ ամեն քնելուց առաջ, երբ գլուխս դնում եմ բարձին, ես խորիում եմ իմ ապագա պատմվածքի մասին: Ես Անդրանիկ չեմ, որ հայրենիքի մասին մտածեմ: Ես Էգիպտոս մարդ եմ: Սա իմ հավատամքն է: Սա մեկ մարդու կրոն է, մի բացված դուռ... Իսկ ես այնքան ազատ եմ այդ դեմից այն կողմ...

ՄԻ ԱՌԱԿ ԱՍԵՄ ԵՍ ԷԼ

Լսած-ասած-գրած առակ են ասում, քանզի ան-առակ մարդն ո՞ւմ է հարկավոր

Անապատի նավը՝ նառը: Ուղտ էր՝ արցունքոտ աչքերով նայում էր անորոշ, մշուշոտ հեռուներին: Ջգում էր, որ վերջին անգամ է նայում: Ուղտ է ու պիտի մեռնի: Տերը տխուր նայում է մեռնող ուղտի աչքերին: Սրբելով իր և ուղտի արցունքները, հիշելով միասին անցած ճանապարհները, դժվարությունները, կրած տառապանքները, տերը շշնջում է ուղտի ականջին.

- Ուղտ, իմ ուղտ, անապատի իմ ընկեր, ինձ մեռնա՞կ ես թողնում: Հո դժգոհ չես ինձ-նից հեռանում:

- Ես բաժանվում եմ անապատից: Տխուր է, բայց բաժանվում եմ: Օրենք է՝ զնուն եմ նախնիներիս մոտ: Եկողները թող բարով գան: Ես իմ անապատը հետս չեմ տանում: Եկողները թող բարի վայելեն:

- Ես էլ չեմ երկարելու: Անապատի օրենքը մեզ համար է: - Տերը ձեռնափը դնում է կրծքին: - Քո տիրոջից, ինձնից, քո ընկերոջից հո դժգոհ չես: Մարդ եմ, անապատի կյանքով ապրող մարդ եմ, գուցե մե՞ղք եմ գործել: Դե, անապատ է, հազարումի փորձանք, երկա՛ր ճանապարհ, երբեմն՝ հուսահատ վիճակ: Ո՞վ է մեր տերը: Անապատի երկնքում Աստված չկա: Ասա, ուղտ իմ, սրտիդ մեջ ինչ կա, ասա՛, սիրելիս, վերջին խոսքդ ինձ ասա, որ իմ խիղճն ինձ չտանջի:

- Տեր իմ, - տիրոջ աչքերին նայեց ուղտը: - Երբեք չեմ ստել: Անապատը մեզ շատ բան սովորեցրեց, բայց ստել՝ երբեք: Մեռնելուց առաջ դրա հարկը բնավ չունենմ: Քեզնից մի անգամ եմ նեղացել: Ես չեմ նեղացել: Դու ես ինձ նեղացրել: Թվում էր, թե պիտի մոռացած լինեմ: Չեմ մոռացել: Վիրավորանքը հետս տանում եմ:

- Ասա, ուղտ իմ, - ձեռքը պարզեց տերը, - ես կուշտ, քեզ սովա՞ծ եմ պահել, ես ջրառած, քեզ ծարա՞վ եմ պահել: Ասա...

- Անապատ է: Մտածել եմ ես անապատի համար եմ: Միշտ միասին ենք եղել: Համարյա իրար նման: Չի կարելի ճանապարհի ընկերոջից նեղանալ: Անտեղի տեղ բարկացել ես, հայիոյել, ճիպտել... Ոչինչ, ասել եմ մտքումս, անապատ է, երկար ճանապարհ է, ավազներ են, օազիսը չի երեվում, մարդ է իմ տերը, թող ջղայնանա,

հանգստանա, ոչինչ, թող ջղայնությունն ինձ վրա թափի, միայն թե սրտի նեղությունն անցնի:

- Այ ապրե՛ս, իմ հասկացող ուղտ ջան, ուրիշ ի՞նչ պիտի արած լինեմ, որ քո սրտին ցավ պատճառած լինեմ: Նման դեպք պիտի չլինի: Գուցե հնարո՞ւմ ես, որ հրաժեշտից առաջ տիրոջդ ցավ պատճառես:

- Օ՛, տեր իմ, անապատի ավազուտներում անթաղ մնամ, թե փորձեմ սուտ խոսել: Իմ անապատն ինձ թույլ չի տվել, որ սովորեմ սուտ խոսել: Դու ինձ վիրավորել ես միայն մեկ անգամ: Հազար անգամ փորձել եմ մոռանալ, բայց չեմ կարողացել: Վիրավորված էլ բաժանվում եմ քեզնից: Ավազների մեջ էլ թաղված չեմ մոռանալու:

Տերն ուզում է հիշել՝ չի կարողանում: Իրենց հաց ու ջուրը միասին է եղել, տանջանք-տառապանքը միասին է եղել: Իրար պաշտպանել են: Թե մի երկու թթու խոսք է ասել, քիչ հետո նայել է աչքերին, փաթաթվել վզով: Ասես ներում է հայցել: Ի՞նչ է արել ինքը, որ ուղտը մինչև մահ-գերեզման հիշում է:

- Դե ասա, մի՛ տանջիր ինձ: Ասա, որ ինձ խրատ լինի՝ իմ մյուս նառին, իմ մյուս ուղտին չվիրավորեմ:

- Տեր իմ, երբ մայրամուտին ինձ կթաղես ես ավազների մեջ, երբ մի փոքրիկ բլուր կբարձրանա, դու կնստես մի պահ, մեր անցած կյանքը կհիշես, կհիշես, թե ինչ համբերատար, սակավապետ նառ ես ունեցել, կհասկանաս, թե ճանապարհի ինչ ընկեր ես կորցրել, լավ կլինի հիշես են օրը, երբ փոքրիկ էր անապատում, երբ աշխարհի բեռն էր իմ շալակին, երբ ես իմ ճանապարհը գնում էի շիտակ, անտըրտունը, դու եղ նեղ պահին, իբր լավություն, ինձ կապեցիր որտեղից հայտնված ավանակի պոչից: Ես էդ վիրավորանքը, էդ էշությունը չեմ մոռանա ավազների տակ:

Տերն ուզում է հիշել: Հիշում է. իր արևով լավություն է արել: Անապատում էլ է պատահում: Իր ուղտը բեռնված է: Հիվանդ է, տկար է: Թվում է, թե ուր-որ է՝ կընկնի, կճեղի բեռան տակ: Հա, հիշում է, կապել է

էշից, որ...

- Քո խելքով, տեր իմ, էշին նայելո՞վ պիտի իմ ճանապարհը շարունակեի... Դե, ես գնում եմ, մնաս բարով: Դու մտածիր: Տարիներ հետո, երբ հասկանաս, որ ես ճիշտ էի, երբ անցնելիս լինես իմ բլրի կողքով, հիշիր ես տեղը, մի պահ կանգնիր ու մոտքումդ, ապա բարձրածայն ասա՛՝ դու ճիշտ էիր, իմ ուղտ: Իսկ եթե գտնես, որ ճիշտ չեմ, լուռ անցիր, մի՛ էլ հիշիր...

... Չգիտեմ ան-առակ ես առակն ինչո՞ւ հիշեց: Անապատից բերած, պատմած, գրած, լսած առակ է: Բայց որ տեսնում եմ ես այնտեղ իշխանավորներին, օրվա ու ժամանակի հոգեառ թալանչիներին, հայրենիքի ծուխը կտրողներին, մեր հավատի մուխը մարողներին, հայրենադավներին, ազգուրացներին, ժողովրդի դեմ ժանիք սրողներին, օտարին հլու-հնազանդ ես այլակերպներին, վիրավորանքից դալկանում եմ, զարմանում ինքս ինձ վրա ու աշխարհի. ուղտաժողովրդին կապել եմ էշի իրենց կառքին ու քշում եմ. քաշում ենք՝ աչքներս նրանց տված մի բուռ զարուն: Ո՞նց են քշում ինձ, մի ամբողջ ժողովրդի: Ուշ է, շատ ուշ է ասելու համար՝ հերն անիծած, որտեղ կտրվի կապը, էնտեղ էլ տիրու պապը... Կապը կտրվել է հենց են պահին, երբ հավատացել ենք ու... կապվել ես տանջանքին: Քաշի՛ր, քաշիր ու տես, թե ո՞նց է ավերվում քո հոգին, քո երկիրը մերոնց ու այլերի ձեռքին:

Է՛... ի՞նչ ասեմ, մի առակի ուղտի ինքնասիրություն ու արժանապատվություն էլ չունենք: Լուսահոգի ուղտը իր ավազների միջին գուցե տեսնում ու զարմանում է, թե ինչ ծանրադառն բեռ է տանում ես ժողովուրդը, ապա ավազներից կհառնի և մինչև Ամերիկա, ի՞նչ Ամերիկա, մինչև Երուսաղեմ կվազի: Ուղտի խրտնածո ու փախածը էշի խրտնածոց բեթար է:

Հ.Գ. - Ան-առակի առակը չեն մեկնաբանում, չեն փորձում տակը ինչ-որ եղած չեղած բաներ տեսնել: Պարզապես տապազրում են, որ և՛ ուղտը կարդա, և՛ ուղտատերը, իսկ էշն իր էշությունը շարունակի:

ՀՐԱՉՕ

ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆՔ՝ ՄԵՉ ՉԻՆԱՅԵԼՈՎ

Ետխորհրդային տարածքի բնակչությունից ամենաբարձր աշխատավարձն ունեն մերձբալթները: Այսպես, էստոնացիների միջին ամսական աշխատավարձը 593 դոլար է: Երկրորդ տեղում են լիտվացիները (460 դոլար), իսկ լատվիացիները (430 դոլար) երրորդն են: Ռուսաստանցիները 302 դոլար միջին աշխատավարձով չորրորդն են: Նրանց հաջորդում են դազախները (260 դոլար), ուկրաինացիները (220 դոլար) և

բելառուսները (214 դոլար): Հարավկովկասյան երկրներից ամենաբարձր աշխատավարձն ունեն ադրբեջանցիները (140 դոլար): Նրանց հաջորդում են հայաստանցիները (114 դոլար) և վրացիները (50 դոլար): Իսկ Սոլովովայում միջին ամսական աշխատավարձը 101 դոլար է: Ամենաաղքատները տաջիկներն են, որոնց միջին ամսական աշխատավարձն ընդամենը 28 դոլար է:

Հայկական խաչքարի պատգամը

Հայ աստվածաբանական միտքը տարբերակում է ստեղծագործության երեք տեսակներ. աստվածային արարչագործություն, բնության ծննդաբանություն և մարդկային գործունեություն: Վերջինիս արդյունքն է արվեստը: Մարդկային գործունեության կառուցումն առանձնանում են նյութը, նպատակը և մտահղացումը, ծրագիրը: Ս. Մեսրոպ Մաշտոցի և Ս. Սահակի աշակերտ Եզնիկ Կողբացին գտնում է, որ նյութն ինքը, բարոյական ու ընկերային առումներով, չեզոք է: Օրինակ. երկաթը չեզոք է: Այն ո՛չ լավ է, ո՛չ վատ, ո՛չ բարի է և ո՛չ էլ չար: Եթե մարդ արածը այն միացնի գեներ գաղափարի հետ, կդառնա մարդասպանության գործիք: Կվերածվի չարի: Եթե կապվի հողանշակման գաղափարի հետ՝ կվերածվի արորի, մանգաղի կամ այլ հողագործական գործիքի: Այն բարիք ու բարիքի աղբյուր կլինի: Հայի ինքնատիպ ներաշխարհը միաձուլվելով քարի հետ ստեղծում է խաչքար: Այս առումով հարցին մոտենալով, մենք խաչքարի մեջ կարող ենք տեսնել հայի ազգային մտածողության առանձնահատկությունը, հայի կրոնասիրությունը, աստվածապաշտությունը, հավատքը:



Հայաստան աշխարհը քարոտ է: Քարը նրա բնական հարստություններից մեկն է: Պատահական չէ, որ «քար» բառը բնիկ հայկական է, հայոց լեզվի հնագույն շերտին պատկանող: Քարը նաև հայ արվեստի նյութն է, հումքը: Դեռ հնադարից, հայը սկսել է քարը «խոսեցնել», քարին «երգեցնել»: Նա կերտել է քարի ճարտարապետություն, քարի գմբեթ: Խոսել ու հաղորդակցել է ժայռապատկերների միջոցով: Հայ աստվածագործության ու մանրանկարչության ակունքները գնում են մինչև քարարվեստը, քանդակագործությունը, մինչև Տորք Անգեղի առասպելական արվեստը: Հիշենք, որ այդ հսկան իր եղունգներով քարեր էր քանդակում: Ինքնատիպ քարարվեստ է նաև խաչքարը: Այն հուշարձան կոթող է, ուղղաձիգ կանգնեցրած մի սալաքար, որի արևմտյան ճակատը կրում է ինքնատիպ քանդակը:

Երբ մեր նախնիները բնապաշտներ էին, ստեղծեցին կանգնեցրած վիշապների (մենհիր վիշապի) կերպարը՝ որպես կյանքի, ջրի, բերքատուության խորհրդանիշ: Վիշապները հանդես եկան նաև որպես ջրապաշտական ուժերի խորհրդանիշ, մինչև նրա մեջ արմատավորվեց բացասական ու չար ուժերի հատկության արմատավորումը: Որպես կյանքի ու ջրի պաշտպանության հետ կապված ուժեր, վիշապների արձանները կանգնեցնում էին բնական և արհեստական ջրային մակերեսների կողքին: Վիշապային ուժը պատկերվեց նաև որպես երկնային ու երկրայինը կապող, որպես որոտ, որպես բարիքի, բնության, գեղեցկության ու հայրենի երկրի պաշտպան որպես Վահագն:

Ուղահայաց բարձրացված քարերը կերպարամափոխվեցին հայկական պանթեոնի փոփոխությանը զուգահեռ: Քառակողմ, քառակուսի ձևով սիմանման քանդակները սկսեցին կերպարել Անահիտ սիրուհին, որը համարվում էր Հայաստանի պաշտպան ուժը, սիրո, գեղեցկության, իմաստության և բերքատվության խորհրդանիշը: Այն կանգնեցվում էր հրապարակներում, պաշտամունքային վայրերում, ճանապարհներում և զանազան շի-

նությունների կողքին: Երբ Հայաստանում քրիստոնեությունը հաստատվեց որպես պետական ու համաժողովրդական կրոն, քառակողմ ուղղահայաց ստեղծանքի վրայի Անահիտը վերափոխվեց Աստվածածնի և մանուկ Հիսուսի քանդակի: Սկսեցին նրա կողքերին քանդակել Սուրբ Գրային կերպարներ: Այս գեղագիտական իդեալը շուտով ծնեց քարի վրա խաչ կերպարելու գաղափարը: Խաչը ընդհանրացված խորհրդանիշն էր քրիստոնեության:

Մետաղի դարաշրջանի հայ բնակիչը սովորություն ուներ արևը ներկայացնել շուրջ քառասուն տարբեր խորհրդանիշներով: Դրանցից էին կլորը, ճառագայթներով կլորը, վարդաթերթիկներից կազմված շրջանակը, կեռ խաչը (սվաստիկան), բազմապատկման նշանը, խաչածև նշանը և ուրիշներ: Շուտով այդ նշանների մի մասը կապվում է լուսի, ջերմության, հավերժության, երկնայնության և արևին բնորոշ այլ հատկությունների հետ: Արևի որոշ նշաններ աստիճանաբար դուրս մղվեցին գործածությունից, ուրիշներ արմատավորվեցին, մի երրորդ խումբ՝ այլափոխվեցին: Վարդաթերթիկներով շրջանակը ժողովրդականացավ որպես հավերժության խորհրդանիշ ու պահվում է մինչև մեր օրերը: Կեռ խաչի օգտագործումը դեռ նկատելի է Բագրատունյաց Հայաստանում: Խաչանշա-

նը, որպես արևի խորհրդանշան, այլափոխվում է: Այն վեր է ածվում սրբության, երկնայինի և աստվածայինի խորհրդանիշի: Որևէ մարդու, կենդանու կամ իրի կողքին դրված խաչանշանը ցուցիչն էր այն բանի, որ այդ էակը կամ իրը սուրբ կամ երկնային է և կամ էլ կապված է աստվածային իրականության հետ: Քրիստոնեության դարաշրջանում, հայ ժողովուրդը շատ հեշտությամբ կարողացավ աստվածապատկանության և սրբության արտահայտող խաչի գաղափարից անցնել կատարել ղեպի խաչյալ Քրիստոսի բերած նոր գաղափարաբանության, հայոց խաչապաշտության ազգային ավանդության:

Խաչը քարի վրա մարմնավորելու գաղափարը իրականանում է երկու հիմնական ձևերով՝ խաչի կերպարը ժայռի կամ քարի վրա քանդակելով և քարին թևաձային խաչի տեսք տալով: Վերջինս, փաստորեն քարից պատրաստված խաչ էր: Այն չդիմացավ պատմության քննության՝ խաչքարին փոխանցելով իր սկզբունքներից մի քանիսը: 7-8-րդ դարերը դարձան խաչքարի արվեստի ձևավորման ինքնատիպ մի անցման շրջան, երբ դասական խաչքարի գծերն սկսեցին հստականալ, այսինքն տեղի ունեցավ կառուցվածքի և զարդաքանդակի հարդարանքի պարզեցում: 9-10 դարերում նկատելի դարձավ զարդապատկերների փոխաբերական ու պայմանական իմաստավորման տիրապետությունը: Դրանից հետո խաչքարը զարգացավ կոթողային ձևերից ղեպի նրբագեղության սկզբունքների հաստատումը, ղեպի ոսկերչական ու աստղագործական աշխատանքը հիշեցնող քարարվեստի կերտումը ղեպի նոր և, իրատիպ ոճավորումը: Քարարվեստը կորցրեց իր նյութականության ցցունությունը և շեշտեց գաղափարական ու հոգևորը: Խաչքարի զարդաքանդակին ավելացավ նաև թեմատիկ պատկերը: Այս միտումն իր զագաթնակետին հասավ Հայկական Վերածննդի դարաշրջանում՝ 11-14 դարերում: Այդ ժամանակաշրջանում էլ մշակվում են խաչքարի կանոնական ձևերը: Դրանից հետո խաչքարային արվեստն սկսում է իր գեղարվեստական դիրքերը զիջել՝ ավելի շեշտելով իր ժողովրդական գաղափարաբանական իմաստը: Վերջին կես դարում, խաչքարային արվեստն սկսեց ապրել իր

գարթոնքի շրջանը և նորից սկսեց ներգործել հայ արվեստի տարբեր ճյուղերի զարգացման ընթացքի վրա և, որոշ դեպքերում, դարձավ հայ ինքնուրույն խորհրդանիշ: Այդ առաքելության մեջ էլ այն սկսեց գարդարել միջազգային հեղինակավոր հաստատություններ: Արտագաղթի ակիբներին հետևելով, այն սկսեց տաշվել նաև սփյուռքում և ավելի որոշակիորեն ազդել համաշխարհային արվեստի վրա՝ միաժամանակ կանգնելով աղավաղման վտանգի առաջ:

Հայ ժողովրդի կողմից խաչը ստացել է ինչպես ֆիզիկական իմաստ (որպես ցից, պատժի միջոց, գունարման նշան), այնպես էլ հոգևոր: Վերջինս ճյուղավորված է: Այն, ինչպես այլ ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի լեզվամտածողության մեջ նըստած է մահ, տառապանք, ցավ, արյունահոսություն, վրեժառություն գաղափարների որպես հոմանիշ: Հայի համար այն ավելի շատ մարմնավորում է այլասիրություն, ինքնագոհություն, մեծ ու աստվածահաճո գաղափարներին նվիրվելու վճռականություն, փրկություն, Քրիստոսի մարդափրկիչ առաքելության նկատմամբ անվերապահ հավատք: Հայ ժողովուրդն իր այս գաղափարներն է միաձուլել քարի հետ ու ստեղծել զուտ հայկական արվեստի գործը՝ խաչքարը, որը անվանվում է նաև «Հայի Հավատո Հանգանակ», «Հոգու փրկության խորհրդանիշ»: Այս գա-

ղափարներն ավելի ընդգծված են «Ամենափրկիչ», «Ցասման» և խորանակերպ խաչքարերը:

Խաչքարը արտացոլում է նաև ստեղծագործական մտքի, երևակայության թռիչքի ու գործունեության անընդհատության ու վերընթացության վերաբերյալ հայ ժողովրդի համոզումը: Խաչքարի զարդերը մի կողմից շատ նման են իրար և մյուս կողմից տարբեր են: Ստեղծագործական կյանքն իրեն երբեք չի կրկնում, թեև հենվում է նախորդի վրա:

Որպես հայ ժողովրդի հոգեբանության, մտածողության, արժեքային կողմնորոշման ու հավատամքի ինքնատիպ մարմնավորում, խաչքարը իր խոսքն է ասում կյանքի բոլոր ոլորտներում: Այն կանգնեցվում է ռազմական հաղթանակները, պատմական կարևոր դեպքերը, մեծ կառույցները, խոշոր նվիրատվությունները, զոհված հերոսների հիշատակը, իրենց նպատակին չհասած զույգերի պատգամը, վախճանված հարազատների հիշատակը հավերժացնելու համար, ճանապարհներին ուղևորին կողմնորոշելու, բլուրների գագաթներից խաչի պատգամը հիշեցնելու և եկեղեցիների ու վանքերի փրկարար առաքելությունը ընդգծելու համար, կրթական հաստատությունների լուսավորչական խորքը առանձնացնելու համար:

Գևորգ ԽՐԼՈՊՅԱՆ



ԻՆՉԻ ՀԱՆԳԵՅՐԵՑ ԳՐՔԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Մարդիկ դադարեցին կարդալ

Այն, որ մեր համաքաղաքացիների հիմնական գանգվածը գործնականում դադարել է իսկական գրականություն կարդալ, ապացույցներ չպահանջող փաստ է: Սակայն սխալ կլիներ մտածել, թե սույն տխուր հանգամանքի վկաներ մենք դարձել ենք միայն վերջին տարիներից: Ամեն ինչ սկսվեց անհամեմատ ավելի շուտ: Այսօր ոմանք հակված են բացատրել խորհրդային մարդկանց առանձնակի ընթերցասիրությունը նրանով, որ նախկին համակարգը կաշկանդում էր մարդու իրական նախաձեռնությունը և նրան մնում էին միայն գրքերը: Մասամբ դա ճիշտ է, ինչպեսև ճիշտ է այն, որ լծացած, այլ կերպ ասած՝ կայուն հասարակության պայմաններում կարդալն ավելի լավ է ստացվում, քան այն երկրում, ուր մշտապես հարվածում են գլխիդ «բարեփոխումների» բռունցքով ու թալանում ամեն քայլափոխի: Սակայն գոյություն ունի նաև մոռացության տրված մեկ այլ պատմական ճշմարտություն. բոլշևիկները, իրենց բոլոր մեղքերով հանդերձ, պատրաստվում էին կառուցել նոր հասարակություն՝ լուսավորյալ (խորհրդային ձևով լուսավորյալ) ժողովրդով: Իսկ խորհրդային կրթվածությունը, չնայած որոշակի սահմանափակությանը, այնուամենայնիվ համաշխարհային կրթական նորմի տարբերակ էր, և բնավ ոչ վատթարագույնը: Պետությունը ժողովրդի կրթության, ինչպեսև, ասենք, քարոզչության համար փող չէր խնայում: Այստեղից էլ այն տարիներին արմատավորվող լուրջ ընթերցանության մոդան: Այստեղից էլ պետական ուշադրությունը (այդ թվում նաև ԿԳԲ-ի կողմից) մտավոր աշխատանքի մարդու նկատմամբ: Այստեղից էլ ԽՍՀՄ-ի վիթխարի մտավորներուժը, որն առ այսօր չի սպառվել, չնայած ուղեղների արտահոսքին և հետխորհրդային մտավորականների նվաստացումներին: Լավ հիշում են 80-ական թվականների վերջի «գրքային հեղափոխությունը»: Այն ժամանակ խորհրդային Միությունում սկսեց բուռն զարգանալ հրատարակչական բիզնեսը, և երևանյան գրախանութներում, վերնիսաժում, կամ էլ հենց փողոցի սեղանիկներին հայտնվեցին Մոսկվայից բերված գրքեր, որոնց մասին լուրջ ընթերցողը նախկինում միայն երազել կարող էր: Դրա հետ մեկտեղ, հենց այն ժամանակ էլ զուգահեռա-

բար սկսվեց լուրջ գրականության արժեզրկման, վարկաբեկման գործընթացը: Ինչո՞ւ դա տեղի ունեցավ: Պետք է ընդունել սոցիալիզմը լուրջ հասարակարգ էր, զվարճանքները համարում էր երկրորդական բան և, հետևաբար, զվարճալի գրականությունն էլ՝ դետեկտիվները, ֆանտաստիկան, արկածային, սիրային արձակը, պետության կողմից սահմանված գրքային նոմենկլատուրայում բավական համեստ տեղ էին զբաղեցնում: Ի դեպ, «թեթև ժանրերում» աշխատող հեղինակների նկատմամբ ճիշտ նույնպիսի վերաբերմունք էր պահպանվում նաև գրողների հանրության շրջանակներում: Հասկանալի է, որ ազատություն ստանալուն պես հրատարակիչներն ու գրավաճառները նետվեցին լրացնելու բաց թողածը: Վաճառասեղանները հեղեղվեցին արյունոտ դետեկտիվների, էրոտիկ, իսկ երբեմն էլ սեռամոլային գրքերի, անբնական արկածների երփնեղանգ ալիքով... Ինչպես հայտնի է, լավ բանը շատ չի լինում, իսկ զվարճալի գրական արտադրանքը պետք է չափազանց շատ լինի, այլապես չես վաստակի, քանզի գրքային բիզնեսում, ինչպեսև սեքսում, միայն նորությունը կարող է փոխարինել որակին: Գիշտ է, ոչ տևականորեն: Եվ սկսեց ձևավորվել բացարձակ անբովանդակ, մեկանգամյա գրական արտադրանքը սպառողի վզին փաթաթելու ամբողջ համակարգ, առաջացավ գրքի շապիկների յուրօրինակ առևտուր: Իհարկե, խորհրդային իշխանության օրոք նույնպես կար որոշակի շապիկային գրականություն, բայց գրքերի այսպիսի հեղեղ, որոնք ոչ միայն պարզապես չարժե, այլև կտրականապես հակացուցված է կարդալ, դեռ երբեք չի եղել: Զվարճալի-կոմերցիոն գրականության գոյության բուն փաստի մեջ արտառոց ոչինչ չկա. դա ծաղկել է բոլոր ժամանակներում և բոլոր ժողովուրդների մոտ: Բայց ծաղկել է իր սեփական, զվարճանքի համար նախատեսված տեղում: Սակայն մեզանում և, հավանաբար, հետխորհրդային ողջ տարածքում այն հասարակական գիտակցությունից սկսեց դուրս մղել իսկական գրականությունը: Եվ վերջնական արդյունքում հաջողությամբ դուրս մղեց: Հենց այդտեղից էլ ամեն ինչ սկսվեց:

Վարդան ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՓՈՍՏԱՏԱՐ ՇԵՎԱԼԻ ՀԱՅՏՆԱԳՈՐԾԱԾ ԴՐԱԽՏԸ



Exegi monumentu...

Այս բացառիկ հուշարձանը տեսնելուց հետո, անմիջապես ցանկություն է ծնվում անվանել աշխարհի ութերորդ հրաշալիք: Սակայն իսկույն կեթ հաշիվ են տալիս ինքը քեզ, որ սա կատարելապես ուրիշ մի բան է: Ոչ թե որ իր արժանիքներով ցածր է մյուս յոթից, հետևաբար չի կարող նրանց հետ համեմատվել: Այլ պարզապես, ճարտարապետական այս եզակի հուշարձանն ստեղծում է իր շարքը, դառնալով առաջինը մարդկային համճարի չլսված ու չտեսնված դրսևորումների ցուցակում: Եվ հավատալն անգամ դժվար է, որ այս հրաշքի հեղինակն ու արարիչն ընդամենը գյուղական համեստ մի փոստատար է, և նրան կոչել են Ֆերդինանդ Շևալ կամ պարզապես փոստատար Շևալ:

...Եվ աշխատել է նա 33 տարի, տաղը հագար օր, 93 հազար ժամ՝ օգտագործելով հազար խորանարդ մետր քար, 3500 պարկ գաջ և ցեմենտ, որպեսզի մեն-մենակ, առանց որևէ մեկի օգնության, «իրագործի իր երազանքը», ինչպես ինքն էր ասում, և անվանի «Իդեալական պալատ»:

Ի՞նչն է նրան մղել այդպիսի աներևակայելի ստեղծագործական սխրանքի, որտեղի՞ց է վերցրել նման աշխատանքի համար անհրաժեշտ, երևակայության, ոգու և մարմնի հզոր եռանդ:

Փոստատար Շևալին, հավանաբար, կարելի է համեմատել այն վանական ճարտարապետների հետ, որոնք մենակ, տարիների ընթացքում, կարծր բազալտի մեջ փորում էին մատուռներ և նույնիսկ վանքեր: Այնուհանդերձ, նրա «Իդեալական պալատը» կատարելապես ուրիշ բան է: Դա եզակի մի ստեղծագործություն է, որի նմանը չի եղել նրանից առաջ: Եվ ոչ միայն, որ մենակյաց վանականները ստեղծում էին դասական ձևերի մեջ և ստեղծագործական եռանդն ստանում բացառապես կրոնական հավատից: Շևալը ենթարկվում էր հազարամյակների, գուցե միլիոնավոր տարիների խորքից եկող կանչերին, այն ժամանակներին, երբ Եվրոպան օվկիանոսի հատակ էր, երբ ձուկը դուրս էր գալիս ցամաք, որպեսզի սկիզբ դներ կաթնասունների դասին:

Ֆերդինանդ Շևալը ծնվել է 1836 թ. ապրիլի 19-ին, Ֆրանսիայում, Դրոն դեպարտամենտի հյուսիսում ընկած Շարն գյուղում: Նա տասներեք տարեկան էր, երբ մահացավ հայրը, իսկ 19 տարեկանում կորցնում է մորը: Հարազատների և ազգականների հաճախակի և վաղաժամ մահերը պիտի ուղեկցեն նրան ամբողջ կյանքում, բայց ինքը կապրի մինչև 1924 թ., մինչև իր երգած Պալատի վերջնական ավարտը: Ասես Աստված, հարազատների կյանքի հաշվին, պահպանում էր նրան, որպեսզի կարողանա իր բացառիկ առաքելությունը լրումին հասցնել:

Շևալն ազատվում է զինվորական ծառայությունից և ամուսնանալով Ռոզալիի հետ, հաստատվում Շարնից քիչ հեռու գտնվող Օտրիվ գյուղում, որտեղ պիտի անցկացնի իր ամբողջ կյանքը և կառուցի իր պալատը:

Նրա երազվուտ նկարագիրը դրսևորվեց դեռևս պատանեկան տարիներին: Վեց տարի նա ճանապարհորդում է: Ենթադրություններ կան, որ նա եղել է նույնիսկ Ալժիրում: Շատ էր սիրում կարդալ, մանավանդ հեքիաթներ: Հացթուխի աշակերտ եղած

ժամանակ այնպես էր տարվում ընթերցանությանը, այնպես էր հեռանում ռեալ իրականությունից, որ վառվող հացի և հարևանների ճիչերն էին միայն նրան դուրս քաշում անուրջներից...

Շևալը շարունակ ծագում էր մեռնության: Նա հեռանում է կնուջից: Կորցնում է մեկ տարեկան երեխային: Նա կատարելապես անկարող էր օրվա հացը վաստակել, իր երազկոտության պատճառով չէր կարողանում որևէ գործի վրա երկար մնալ: Իրապաշտ գյուղացիների մեջ նրա պահվածքը սկզբում զարմանք է առաջացնում, հետո՝ վրդովմունք: Որպես հետևանք, երիտասարդ և առողջ «երագողը» հայտնվում է կատարյալ մեռնության մեջ: Գյուղացիները հրաժարվում են նրան հասկանալ: Նրանց համար Շևալը պարապ-սարապի մեկն է:

Սակայն Շևալն ինքը լինելով գյուղացի, հրաշալի հասկանում է համընդհանուր վրդովմունքի պատճառը, բայց կայնպես շարունակում է երազել... հարթմնի: Նա ժամերով, աննպատակ, թափառում է դաշտերով և անտառներում: Նրա այդ արտառոց հակումը, տեղական իշխանությանը գաղափար է տալիս փոստատարի պաշտոն առաջարկել «թափառաշրջիկին»: Շևալը հաճույքով ընդունում է առաջարկը. այժմ նա օրերով, ազատ և, ամենակարևորը, լիովին հիմնավորված, կարող է թափառել գյուղի շրջակայքում:

Այսպիսով, երեսուն տարեկանում, տարին 490 ֆրանկի դիմաց նա պարտավոր է փոստը տեղ հասցնել. 8 ժամվա ճանապարհ, ժամում 4 կիլոմետր արագությամբ: Այդպիսին էր պայմանագիրը: Քսանհինգ տարի շարունակ նա օրեկան պիտի քայլի երեսուն կիլոմետր: Լուսաբացից մինչև մութն ընկնելը: Այս աշխատանքը նրա սրտով է: Ամեն օր քայլում է միևնույն ճամփով. Օտրիվ-Տերաս-Օտրիվ: Այս միապաղաղությունը բնավ չի հոգեցնում նրան, որովհետև նա դիտում է շուրջբոլորը, յուրովի գնում: «Ես ամեն օր անցնում էի մի տեղանքով, - հետագայում կգրի Շևալը, - որտեղ ծովն իր ներկայության որոշակի հետքերն էր թողել»:

Շևալը ո՛չ պատմաբան է, ո՛չ էլ երկրաբան, սակայն նա հասել է այս գիտության իր անսխալական ինտուիցիայով, քանզի երազանքների ճամփով շարունակ «վերադառնում» էր իր նախապատմական ակունքներին:

Նրա կինը մահացավ երիտասարդ տարիքում, 1873 թ.: Շևալի անտարբեր պահվածքն առաջացնում է ամբողջ գյուղի վրդովմունքը: Սակայն սա անսիրտ կամ անհոգի մարդու անտարբերությունը չէ: Շևալը երագող էր, նա չէր կարող այդպիսին լինել: Պարզապես նա արդեն ուրիշ ժամանակներում և ուրիշ աշխարհներում է, արդեն ոտքով գլխով ապրում է իր հեքիաթի, իր երագի իրականության մեջ:

«Իմ երագանքը, - գրում է նա, - ինձ թվում էր հիվանդագին երևակայության մի արդյունք, և ես չէի համարձակվում այդ մասին կիսվել որևէ մեկի հետ: Եվ բավական էր, որ մոռանալի երագս, որպեսզի որևէ պատահար ինձ նորից տաներ այնտեղ: Այսպիսով, ոտքս դիպավ ինչ-որ բանի և քիչ էր մնում ընկնելի: Ցանկացա մոտիկից տեսնել իմ «գայթակղության քարը»: Նա այնպիսի տարօրինակ ձև ուներ, որ վերցրեցի և տարա ինձ հետ: Հաջորդ օրը վերադարձա նույն տեղը և ավելի գեղեցիկ քարեր գտա... և դա ինձ ոգևորեց»:

Դա ոչ միայն «գայթակղության», այլև հիմնադիր քարը հանդիսացավ... Այդ օրերին նա արդեն 43 տարեկան էր: «Երագողն արթնացավ և իջավ հողի վրա», - գրում է Ֆրանսիացի արվեստաբան Կլոդ Բոնկոմպենը այս դեպքի մասին: Հավանաբար իրողությունն այլ է:

Գյուղական համեստ փոստատարի հանճարեղությունն ու մեծությունը հենց այն են, որ նա երագում էր հարթմնի և բաց աչքերով: Նա ոչ մի անգամ, երազների մեջ, փրկարար ապաստան չի փնտրել իրականությունից, անճանառուր չի եղել անկարելի անուրջներից: Ընդհակառակը, նա մինչև ուղևն ծուծն մնում էր գյուղացի և ամուր կանգնած էր հողի վրա: Պարզապես նրա երագանքի ահռելիությունը պահանջում էր ժամանակ, իմաստավորում, որպեսզի ճիշտ մարմնավորում գտներ: Եվ այդ օրը շղանակալից է նրանով, որ նրա գլխում խմորվող, հասունացող գաղափարներն ու մտքերը վերջապես գտան իրենց ձևը, առնվազն իրենց իրագործման նյութը՝ քարը: Ավելին, միլիոնավոր տարիներ աննկատ ու անտեսված քարերի մեջ նա գեղեցկություն տեսավ: Եվ դա բնական, նախնական գեղեցկությունն էր: Եվ այդ ժամանակ ասացի ինքս ինձ. քանի որ բնությունն արդեն ստեղծել է արձանը, ես կդառնամ ճարտարապետ ու որմնադիր»:

Շևալի հրաշածին արվեստն ուսումնասիրած մի շարք արվեստաբաններ իզուր փորձում էին իր ժամանակի մեծ արվեստա-

գետների ազդեցության հետքերը գտնել նրա ստեղծագործության մեջ: Շատ հաճախ նրան համեմատում էին Գյուստավ Դորեի հետ: Պոստապոստի կենսագիրները նշում են, որ նա շատ էր սիրում այդ օրերի տարածված պատկերազարդ հանդեսները կարդալ: Ենթադրում են նաև, որ Շևալը, 1878 թ. այցելել է Փարիզի Համաշխարհային ցուցահանդես:

